Ընկղենին մեծ է , իսկ անոր պտուղը  
փոքր է :

Փոքր ծառը կրնայ մեծ պտուղ տալ :  
Փոքր տղայք կրնան մեծ բաներ սովորիլ ,  
եթէ աշխատին :

Հայոց մատեւակու ու անուան մասաւ

86.

Գյական . Խօյր . Համբօյր .  
Հյակապ . Բյօր . Խրախօյս .

Աչքը ըք տեսնող մարդու մը ի՞նչ կը-  
ոնք . . . . . :

Գիշերը ճրագ վառելով ի՞նչ կը ըս-  
տանանք . . . . . :

Վարդի անոյշ հոտոյն ի՞նչ անուն կու-  
տանք . . . . . :

Կոյր . Լոյս . Բյօր :

Ոյ տառերն եւս միանալով ձայնաւորէ  
առաջ իրենց բնական հնչումն ունին , իսկ  
ձայնաւորէ վերջ ուղ կը հնչուին :

Աւելի լաւ է աչքով կոյր լինիլ , քան  
մոքսվ :

Ամեն ծաղիկ բյօր չունի :

Խաւարին կը յաջորդէ լոյս :

Համբօյրը կարօտութեան կնիքն է :

կալուածատէր կը կոչուի կալուած ու-  
նեցողը :

Զուրը լոյծ և հեղուկ մարմին է :

Ուրախութիւնը տրամութեան բացա-  
կայութիւնն է :

Լուսոյն խաւար՝ խակ խաւարին լոյս կը  
յաջորդէ :

Աւելի կը գործուին խաւարի մէջ չար՝  
խակ լուսոյ մէջ բարի գործեր :

Վերեւի դասի իւրաքանչիւր բառի նկատ-  
մամբ հարկ է տեղեկութիւն տալ աշակերտին,  
զի անոնք մեծ մասամբ փոփոխական հնչմամբք  
պատրաստուած են :

## 87.

### Կրկնութիւն .

Մարդիկ մետաղը կը ստանան հողէն .  
Աետաղ են ոսկի, արծաթ, պղնձ, երկաթ,  
կապար, անագ . . . . :

Մէկը, չորսը, եօթը, հարիւրը և բիւրը  
թիւեր են :

Ծառը, թթնջուկը, սունկը եւ խոտը  
բոյսեր են :

Բուրդն ու եղի՞ւրն ալ բոյս են :  
Ձին, ցուլը, ուղտն ու էշը խոտակեր  
և չորքոտանի կենդանիներ են :

ա, ե, է, ը, ի, ո, օ, ձայնաւոր  
տառեր են :

Ու, իւ, եօ, եա միացեալ ձայնաւոր-  
ներ են :

Ոյ, ու, իւ փոփոխական հնչումներ  
են :

### Հարցում .

Հայերէն տառերը քանի՞ են, քանի բա-  
ժանում ունին . ո՞ր տառը երկճայն է . ո՞յք են  
միացեալ ձայնաւորք, փոփոխական հնչում ու-  
նեցող զոյգ գրեր . ի՞նչ է վանկը, բառը, և  
այն և այլն : Աշակերտք սոյն հարցմանց պա-  
տասխանելու եւ անոնց յատուկ օրինակներ  
գտնելու են :



88.

## կենդանիներ .

Երկրի վրայ կան շատ տեսակ կենդանիներ . ինչպէս են չորքոտանի , թռչուն , ձռւկ . երկակենցաղ , խեցեմորթ . միջաս սողուն , որդ և գեռուն . որք մեծ մասամբ ծանօթ են մեզ :

Այս կենդանիներէն ոմանք ընտանի են , ոմանք վայրենի , կան և մասկեր , խոտակեր՝ յորոց ոմանք որոճող են , թաթաւոր ձանկաւոր , արբակաւոր եւ կճղակաւոր կենդանիներ :

89.



## Կով .

Հոս նկարուած է կով մը , որ ունի չորս ոտներ և երկու եղջեւրներ : կովը մեղ մօս կը բնակի ընտաներար եւ կը սնանի խոտե-

ղէններով : կովու ոտից ստորին մասը երկուքի բաժնուած է : կովը երբ հանգիստ նստի , կը տեսնես որ ծնօաները կը շարժէ . կը ծամէ , կ'ուտէ , թէեւ առջեւը խոտ կամ ուրիշ ուտելիք չ'ունի . նա կ'որոճայ :

90.

Կովը չորքոտանի է , վասն զի չորս ոտք ունի . եղջերաւոր է , վասն զի գլխուն վրայ եղջեւրներ ունի :

Մարդց մօտ կը բնակի , ուստի և ընտանի է :

Կովը խոտ կ'ուտէ , ուրեմն և խոտակեր է . նա կ'որոճայ , ըսել է որոճող ալ է . նորա ոտից ստորին մասերը բաժնուած են , որով կճղակաւոր կամ պճեղնաւոր ալ է :

Ուրեմն կովը պճեղնաւոր , որոճող , եղջերաւոր , խոտակեր , ընտանի չորքոտանի մ'է :

Կովը կը ծնի ձագեր , ասոր համար կենդանածին եւս կ'անուանենք զայն :

Կովը օգտակար է մեղ իւր կաթով երբ ողջ է . իսկ երբ մորթուի , անոր միսը կ'ուտէնիք . կաշիէն մուճակներու նրբաններ կը շինենք . ոսկրէն՝ դանակի և դգալի կոթեր , իսկ փորոտիքէն՝ սօսինձ :

Կովուռ ճարսպը երբ չ'ուզենք ուտել, ան-  
կէ կը շնենք ճրագ և օճառ :

Կովուռ կճղակներու փոքրիկները նորա  
փորոտեաց հետ կը խառնեն երբ սօսինձ  
շնեն . իսկ մեծ և սպիտակ կճղակներէն  
կը շնեն դդալի թաթեր , որ թափանցիկ  
կ'ըլլան :

Կովուռ եղջիւրէն կը շնուի դդալի կոթ  
և սանար . աղկըէն ալ լար :


Եզը՝ որ կովուռ եղբայրն է , կովէն պա-  
կաս օգտակար չէ մեզ . բայց տարբեր կեր-  
պով . սա աւելի օգտակար է մեզ երկրա-  
դործութեան համար , վասն զի եզը կը լո-  
ծենք սայլի բեռ կրելու համար , կը լծենք  
արօրի , քոթանի գետին հերկելու ժամա-  
նակ , և ցաքանի՝ երբ ցանուած արտը կը  
հարթենք :

Կովուռ և եղան օգոււան հաւասար է մոր-  
թուելէ յետոյ . իսկ ողջ վիճակաւ տարբեր  
կերպով կ'օգտինք աննցմէ :

Ի՞նչ բանէ կը շնեն մարդիկ կարագը ,  
մածունը , թանը և պանիրը : Երշիկը և ա-  
պուխտը :



91.



## Ծուն.

Ծունն ալ հարկ է չորբոտանի կոչել .  
վասն զի չորո ոտք ունենալէ զատ՝ իր կաղ-  
մութեամբ շատ նման է կովուռ : Բայց շունը  
խոտակեր չ'է , նա միս կուտէ , և եղջիւր ալ  
չ'ունի . սակայն կովուռ նման ընտանի է :  
Ծունը չ'որոճար կովուռ նման և ոչ ալ կը ճ-  
շակաւոր է . անոր ոտից ստորին մասն կը  
կոչուի թաթ , որ ունի մատներ և եղունդ-  
ներ :

Ծունը տիրասէր եւ հաւատարիմ կեն-  
դանի է . նա կը պահպանէ մեր տունը , գոյ-  
քը և ոչխարաց հօտը . որսորդութեան հա-  
մար ալ շատ պիտանի է . նոյնպէս եւ Ճա-  
նապարհորդութեան ժամանակ :

Ծունը սիրով կը կատարէ իւր տիրոջ

Հրամանը, և մինչեւ իսկ կեանքը չըխնայեր  
տիրոջը համար :

Շունկը սաստիկ հոտառութիւն ունի և  
արագ կը վազէ բաւական ժամանակ . նա  
չըմուանար երեէք զինքը կերակրողը :

Շներու տեսակները շատ են, հասա-  
րակ շուն, գամիու, սկունդ, որսօրդ . . . :

## 92.

## Հանելուկ .

Վերեւը զցոյ բուսած թուր է,  
Թուրէն քիչ վար մի մութ դուռ է .  
Դուռը թէ բացուի, չէնքը գլրդի .  
Մի վախնար չըփլիր, լեզոյ չըփրթի:  
Շարժուն է չէնքը, չորս սիւնի վրայ,  
Երբ ուզես ետեւէն անձրեւ կը տեղայ .  
Անձրեւն է սպիտակ, կերակուր մանկան,  
Թէ չէնքը կործանես, սնունդ է մարդկան:



## 93 .



Բաղդատութիւն .

Կով և շուն .

Նմանութիւն .

Կովը չորբուանի է, շունն ալ չորբուանի է,  
Կովը ընտանի է, շունն ալ ընտանի է .  
Կովը կենդանածին է, շունն ալ կենդանա-  
ծին է ,

Կովը մեզ օգտակար է, նոյնպէս և շունը .  
Կովը կաթնասուն է, նոյնպէս և շունը ,  
Կովը շատ գյոներ ունի, նոյնպէս և շունը .  
Կովն ունի գլուխ, պարանոց, բուն ոտներ ,  
զորս շունն ալ ունի :

Տարբերութիւն.

Կովը խոտակեր է, իսկ շունը մասկեր,  
Կովը որոճող կենդանի է, իսկ շունը ոչ.  
Կովը պճեղնաւոր է, իսկ շունը թալժաւոր.  
Կովը գլխուն վրայ եղջիւր ունի, իսկ շունը  
եղջիւր չ'ունի:  
Կովու մազերը կարճ են, իսկ շանը երկար.  
Կովը կաշի ունի, իսկ շունը մորթ,  
Կովու կաթն ու միսը կուտենք, իսկ շանը՝ ոչ.  
Կովը մեծ է, իսկ շունը փոքր է,  
Կովը կը բառաչէ, իսկ շունը կը հաչէ,  
Կովը լեռ գաշտ՝ կարածի, իսկ շունը ոչ.  
Կովը գիշերը գոմը կը քնանայ, իսկ շունը  
շատ տեղեր:



## 94.



Թու չուն.

Թուչուն կը կոչուին այն կենդանիները,  
որք երկու թռիչ ունին, հաւկիթ կ'ածեն  
և մարմիննին վետուրով ծածկուած է:

Սեր թուչուններէն կ'ստանանք հաւ-  
կիթ, միս եւ վետուր: Ամեն թուչուց միս  
չ'ուտուրիր. թուչուն կայ որ ինքը միս կու-  
տէ, կայ և խոտակեր թուչուն:

Թուչունք ոչ միայն կը թռչին, այլ եւ  
կը քալեն ու ոմանք կը լողան:

Թուչունի կը լնին ընտանի և վայրենի:

Զայլամ թուչունը ըթռիր, բայց այն-  
չափ արագ կը քալէ որ, ձի մը հաղիւ կա-  
րող է անոր հետ վաղել: Զայլամն ունի  
թանկագին հետուրներ: Լողացող թուչուց  
մագիլները՝ տաից մատները մաշկով կցուած  
են: Գիշերահաւաւը կը թռչի, բայց միւս  
թուչուց նման ոչ վետուր ունի եւ ոչ կը

տուց . այլ լերկ մարմին ունի և մկան պէս  
բերան ու սուր ատամներ :

Թռչուն են , հաւ , սագ , բադ , արծիւ ,  
արագիլ , ձնձղուկ , սարեակ , կաքաւ , ագ .  
ուաւ , սիրամարդ , վասեան , աղաւնի , տատ-  
րակ , սիմակ , գեղձանիկ , արտօյտ , թռւ-  
թակ . . . . .

*լ.*

Բարեսէր մարդիկ բարիք մ' ըստ ըլ-  
լալնուն համար կ'ուրախանան :

Վեհանձնութիւնը առաքինութիւն մ'է :

Աշխատասէր կոչուելու համար սովորա-  
կանէն քիչ մ'աւելի աշխատելու է :

Հայր աշխատութեամբ կ'ուտուի , ով  
որ շաշխատիր հաց չուտեր :

Մեր բոլոր գործերը կ'իմացուին . Եթէ  
կ'ուղենք բարի անուն ստանալ , զէտք է  
բարի գործենք :

Շատ անդամ ը տառը՝ մը բառին մէջ , երբ  
նորա յաջորդը ձայնաւորով սկսի , չգրուիր ,  
նոյնպէս և բայերու ներկայ և անլատար ժա-  
մանակաց վրայ աւելցուած կը մանկան ը տա-  
ռը երբ բայց ձայնաւորով սկսած է զանց առ-  
նուելով անոնց տեղ ասլաթարց մակակէտը  
կը գրուի : Հարկ է աշակերտաց ուշադրութիւնը  
հրաւիրել և այս պարագայի վրայ :

95.




Մեծ պահոց վերջին եօթնեակը  
Աւագ Հինգշաբթի .

Զատիկէն երեք օր առաջ՝ Քրիստոսի  
չարչարանաց և մահուան նախորդ օրը Տէր  
Յիսուս իր աշակերտներովը Երուսաղէմի  
Ախոն վերնատան մէջ կընթրէր . ընթրեաց  
Ժամուն կը խօսէր իր բռնուելու , չարչա-

բուելու և մեռնելու վիճակին վրայ . և ա-  
շակերտները կը քաջալերէր որ չը յուսա-  
հատին : Աշակերտները տիսուր էին իրենց  
վարդապետին վերահաս վիճակին նկատ-  
մամբ . բայց և այնպէս միսիթարական պատ-  
ճառներ ևս ունեին . միայն Յուդան , որ սոս-  
կալի մատնութեամբ պիտի դաւաճան ածէր  
իր Տէրը , սաստիկ մոտառնջութեան մէջ  
էր : Սոսկալի ժամը մօտ էր . Յիսուս գիտէր  
զայս . և իւր աշակերտաց յայտնեց , որոց  
իւրաքանչիւրն աւելի եւս տիսրագին կեր-  
պով վշտահարեցան , տեսնելով որ իրենց  
մէջէն է Տիրով մատնիչը . Քրիստոս Հացի  
պատառը Յուդայի տալով ըստ « Գնա՛ , և  
շուտով ըրէ ընելիքդ » . եւ Յուդայ դուրս  
ելաւ :



## 96.



## ԵՐԿԻՐ .

Դաշտ կը կոչուին ընդարձակ տափարակ  
գետինները : Դաշտը կը հերկէ Երկրագործը  
քութանով կամ արորով :

Գետնի երեսէն գէպ 'ի վեր բարձրացած  
Երկերը Լեռ կ'ըսուի : Փոքրիկ լեռներուն  
Բլուր կ'ըսենք : Լեռներու և բլուրներու  
վրայ կ'աճին պտղատու և անպտուղ ծառեր  
և գեռ շատ տեսակ բոյսեր - թուփ , խոտ ,  
սունդ և այլն :

Լեռներու բարձրագոյն մասը գագաթ  
կը կոչուի :


Եթէ լեռներու գագաթներն հարթ լի-  
նին , լեռնադաշտ կ'ըսուին :

Եթէ մէկմէկու կից լեռներ ըլլան , պէտք  
է « Լեռանց գօտի » անունը տալ անոնց :

Երկու լեռներու կողերէն վար՝ ամենախոր գետինը ձոր կ'ըսուի :

Դաշտերու, լեռներու և ձորերու մէջ կը բուսնին շատ տեսակ բոյսեր, և այդ տեղերը կը բնակին այլ և այլ կենդանիներ :

## 97.



## Չուկ.

Չուկը մեզ ծանօթ է իր պաղ ու սահուն մարմնով և համեղ մոռվը :

Նայեցէք պատկերին մէջ նկարուած ձուկը. նա ունի դլուխ, բուն. տուտ եւ լուղակներ :

Չուկը լողալու համար կը շարժէ իր լուղակները. իսկ աջ ու ձախ կողմը դառնալու համար իբր զեկ կը դործածէ տուտը:

Չուկը կ'ապրի ջրի մէջ, եթէ զայն ցամաքը հանես, քանի մը վայրկենէ կը մեռնի. վասն զի նա կարողէ օդոյ մէջ ապրիլ:

Չուկ են տառեխ, կարմրախայտ, թրածուկ. կարապետիկ, թիւնիկ, գայլածուկ, շանածուկ, օձածուկ, վահանածուկ, կէտ. . . . .

Չուկերը կը դանուին ծովերու, լճերու և գետերու մէջ :

Պէտք է բաղդատեն աշակերտք Չուկը՝ Թոշնոյ, Հաւը՝ Բաղի, և Զին՝ Ոչխարի հետ :

## Չ, Շ, Ա.

Չդաշ.	Չկնի.	Սկիզ.
Չդալ.	Չմայլել.	Շտապ.
Չհետ.	Չդացում.	Սկիւռ.
Սպանդ.	Սպիտակ.	Շտեմարան:

Չմելին կտրելու և կեղեւելու գործի մէկ, որ կը շնուռի երկաթէ մէկ, երկու, երեք կամ չորս շեղիներով:

Մարդիկ շտեմարանի մէջ կ'ամբարեն ձմեռուան պաշարի համար ցորեն, ալիւր, գարի, կորեկ և այլ հացահատիկներ :

Առանց տեսնելու ծաղիկը, կարող ենք զգալ հեռուէն անոր քաղցր բուրը :

Բարեհամբաւ մարդիկ անուշահոտ ծաղը  
կը կը նմանին , որոց բարի անունը հեռու  
տեղեր կը տարածուի :

Շտապով գործի սկսողը պէտք է ըդ-  
գուշութեամբ գործէ :

Զ , Ծ և Ս տառերու մասին հարկ է բա-  
ցատրել որ երբեմն նոքա իրենց սովորական  
հնչումին զատ կը հնչուին նաեւ իրը ըշ , ըզ  
և ըս , որոց օրինակներն վերեւ դրուած են :

98.



### Գորտ .


Կռառ , կռա՞ , կանչելով ջրին տակը  
խորասուզեցաւ գորար , երբ չար տղայ մը  
քար նետեց լճին մէջ : Բոլոր գորտերը լը-  
սելով նորա ձայնը հաւաքուեցան լճին յա-  
տակը և դուրս չ'ելան մինչեւ որ քար նե-

տող մանուկը հեռացաւ անկէ : Բայց քար  
նետող մանուկը շատ զարմացաւ գորտին  
երկար ժամանակ ջրին տակ կարենալ մնա-  
լուն . նա չէր լսած թէ գորար երկակեն-  
ցաղ է :

Երկակենցաղ կ'ըսուին այն կենդանիք ,  
որք երկու տեսակ կեանք կը վարեն , ջրային  
եւ ցամաքային , ինչպէս են , գորտերը եւ  
կրիաները , տղբուկը , օձը . . . . :

Աւելի զարմանալի է օձի լողալը , որ ոչ  
գորտի նման թաթիկներ ունի , ոչ ալ ձկան  
նման լրւղակ , բայց և այնպէս գլուխը վեր  
քարձրացուցած ջրին երեսէն սլաքի նման  
կը սուրայ , իբր թէ ցամաքի վրայ ըլլար :

Երկակենցաղները ձուկի նման ջրայ մէջ  
և մուկի նման ցամաքի վրայ կրնան ապրիլ :





## Մայրիկը .

Ո՞վ կը խնամէ փոքրիկ երեխան .  
Ո՞վ կը կերակրէ , կը պաշտպանէ զայն .  
Ո՞վ անոր համար զգեստ կը կարէ ,  
Եւ կ'զգուշացնէ զայն ամեն չարէ :  
Ո՞վ դիշեր ցերեկ ծիծ կուտայ անոր ,  
Լաթը կը լուայ , կը հագցընէ նոր .  
Ցերեկն զքոսանք դիշերը հանդիստ  
Կուտայ , որ տղան չըլլայ անհանդիստ :  
Երբ քիչ մը մեծնայ , մը անոր քաղել ,  
Խօսիլ , խնդալու կուտայ պատճառներ .  
Ո՛չ այլ ոք , մայրը , այն ; միշտ մայրը .  
Անդեցէք , տղայք , ձեր քաղցրիկ մայրը :

Ինչպէս արձակ՝ նոյնպէս և ոտանաւոր դա-  
մերու խնաստն բացատրելու է մանկանց ; որք

յետ սովորական ընթերցման պէտք է իրենց  
գործածած բառերով բացատրեն դասի իմաս-  
տը :

## Ե ւ Ո

Երբ .	Երէկ .	Որբ .	Ողորկ .
Երկ .	Գերի .	Որթ .	Ոմեն .
Երդ .	Կովեր .	Ոստ .	Ոսեղ :

Դերձակը ասեղով կը կարէ , և մատնո-  
ցով ասեղը կը վարէ :

Աստուած ստեղծեց զմեզ , և մեր շուրջը  
գտնուած՝ մեր տեսած և չ'տեսած ամեն  
առարկաները :


Ծեր և երիտասարդ ամենքն ալ բարե-  
սիրտ և բարեգործ ըլլալու պարտաւոր են :

Ով որ ողորմութիւն տայ , բարիք կը  
գործէ :

Ով որ սիրել չ'գիտեր , ցաւիլ չ'գիտեր ,  
և ով որ ցաւիլ չ'գիտեր , անզգայ է :

Հողմը կամ հովը կ'ալէ կոծէ ծովը :

Ու ե տառերը բառի սկիզբն իրենց բնա-  
կան ձայնն ունին . իսկ բառերու մէջ տեղ  
աւելի նուրբ՝ Ո իբր Օ , և Ե իբր Է կը հըն-  
չուին : Ուշադրութեամբ արտասանելու են  
մանկունք դասի այն բառերն՝ որոց մէջ Ե , Ո  
տառերը կը գտնուին :



### Հանելուկ.

Կը խօսի շատ լաւ  
Երբ քիթը կտրես,  
Առողջ վիճակաւ  
Անօգուտ է քեզ։

ԲԱՂԻԱՏՈՒԹԻՒՆ

### Օձ և Գորտ.

ՆՄԱՆՈՒԹԻՒՆ

Օձը սողուն է, Գորտն ալ սողուն է.  
Օձու մարմինը լերկ է, Գորտի մարմինն ալ  
լերկ է,  
Օձը կը լինի գունաւոր, նոյնպէս և Գորտը.  
Օձը վայրենի է, Գորտն ալ վայրենի է . . . .

ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ

Օձը թունաւոր է, իսկ Գորտը թոյն չունի.  
Օձի մարմինը տաք է, իսկ Գորտինը պաղ.  
Օձը թաթիկներ չունի, իսկ Գորտը ունի.  
Օձը երկար է և կլօր, իսկ Գորտը կարճ և  
տափակ։

Սողուն են այն կենդանիք եւս, որք թէեւ  
չեն սողար, եւ ունին ստներ. բայց քալած-  
ժամանակնին կուրծքերնին կամ փորերնին  
դետնին կը քսեն։ Օձ, Գորտ, Կրիայ, Ոզնի,  
Մուկ . . . .

### ԸՆԺԵՐԺԱՆԱԿԱՆ ՃԱյՆԱՆԻՀ.

Հայրս՝ մայրս՝ քոյրս՝ եղբայրներս և ես  
ամեն երեկոյ կ'աղօթենք քնանալէ յառաջ։  
Այն աշակերտը՝ որ չար է, ատելի կ'ըլ-  
լայ։

Այս դասի մէջ ուսանելու է մանուկը Բութի  
ազդեցութիւնն ընթերցման մէջ։ Ապա Ստո-  
րակէտի։

Խեցեմողթ կը կոչուին այն կենդանիք՝  
որք ոսկրէ պատեաններու մէջ են . ինչպէս  
են , խեցւիառ . Ոստրէ . Խեցգետին .  
Ուլականջ . . . . :

Մի ըներ այն բանը՝ որ օրինօք արդիւ-  
ուած է :

Ոչ շատախօս լինիլն օգտակար է , և ոչ  
շատ խօսելէ յետոյ զղջան :

Հաց ուտելու համար՝ մարդ պէտք է  
աշխատի . անձնական պարտաւորութիւն  
մ' է այս :

Ո՞ւր կը կրթուի տղայ մը , եթէ ոչ վար-  
ժարանի մէջ :

Ի՞նչ գեղեցիկ է մանկութեան ժամա-  
նակը , յորում մանուկը կարող է աղատ  
կերպով վարժարան երթալ եւ ուսում  
սովորիլ :

Ափսոս այն ժամանակին , զոր ՚ի զուր  
կը վասնենք :

Շեշտ , Պարոցկ , Միջակէտ , Երկար եւ  
վերջակէտ :



## 101.



## Մեղու .

Միջատ կը կոչուին կարգ մը կենդանի-  
ներ , որոց մարմինը հատածներու բաժնը-  
ւած է :

Միջատներու տեսակը շատ է . մեղ ծա-  
նօթ Միջատներն են , Մեղու , ծանձ ,  
Ծրչիւն , Բղեղ , Թիթեռնիկ , Մոծակ . . . . :

Միջատներէն ամենէն օգտակարը Մե-  
ղուն է , որ թէ իրեն եւ թէ մեղ համար  
մեղը կը շինէ :

Մեղուներու ընկերութիւնը շատ զար-  
մանալի է . նոքա քաղմութեամբ մէկ փե-  
թակի մէջ կապրին . ունին կարգ ու կանոն ,  
ամենին ալ կաշխատին եւ իրենց մեծին՝  
մայր մեղուին , կը հնազանդին :

Մեղուները մեղը կը շինեն ծաղիկներէ ,  
իրենց բրդոս թաթիկներով կը կրեն ծաղլ-  
հափոշին փեթակներու մէջ , ուր մեղը

Ալ պատրաստեն հոն գտնուող աշխատաւոր  
մեղուները :

Մեղուն ձուածին է :

Մեղուք երեք տեսակ են, արու՝ մայր եւ  
մակ մեղու : Մեղրամոմ՝ եւ նորա պէտքը,  
մեղրի համը օգուտը : Խոյթող կենդանի, կիճ :



102.

Զղջիկ, անոր . Ճ պատահ  
Զղջիկ թռչուն է, լաւ դիտեցէք անոր  
ձեւն ու կազմն . ուր են այդ թռչնոյ փե-  
տուրները, ուր է կտուցը : Նա ոչ փետուր  
ունի և ոչ կտուց . բերանը կը նմանի ճիշդ  
մկան բերնի . իսկ թեւերը բարակ մաշկէ

շնուրածի պէս են, որոց վրայ կ'երեւին  
երկու փոքրիկ կեռեր . նա այդ կեռերէն  
կախուած կը քնանայ ցերեկը ծառի մը ճիւ-  
ղէ . իսկ գիշերը դուրս կ'ենէ արածելու :

Զղջիկը ցերեկը չ'տեսներ, բայց գիշերը  
կը տեսնէ . այս պատճառաւ գիշերահաւ  
ալ կ'ըսենք անոր :

Զղջիկը շատ արագաթոիչ է, եթէ ու-  
զես անոր անց ու դարձը տեսնել, պէտք է  
գլուխդ միշտ այս և այն կողմը շրջես առանց  
դադար առնելու :

Զղջիկի մարմնոյ կազմութիւնը նուրբ  
ըլլալով՝ կրնայ խիստ նեղ ճեղքուածներէ  
կամ բացուածքներէ անցնիլ անվտանգ :




103.



## Հանելուկ .

Շատ զարմանալի  
Ծառ մը գիտեմ ես ,  
Նայէ , ի՞նչ բանի  
Կը նմանցընես .  
Ինքն է կենդանի ,  
Եւ միշտ կը տեսնես :  
Հինգ ձիւղեր ունի ,  
Երկուքն է տակը ,  
Երկուքն ալ բունի՝  
Յաջ և յահեակը .  
Ճիշդ իւր կեդրոնի  
Մէջն է արմատը :

Նորա վերի ձիւղն  
Է կլոր ձեւով ,  
Եւ իբրեւ մի հիւղ  
Ամենայն կերպով  
Ունի պատուհան ,  
Խորշ , գուռ և խորան :  
Մէն մի չորս ձիւղեր  
Ունին հինգ ոստեր ,  
Ոստերուն ծայրը  
Տափակ պտուղներ ,  
Որք թէեւ չ'ուտուին ,  
Բայց կը գործածուին :  
Զէ մի հազուագիւտ  
Այս ծառ հիասքանչ .  
Հող է նորա նիւթ  
Բայց լաւ զարդարուած .  
Գարնան տեսքն է դիւթ՝  
Իսկ ձմբան թառմած :  
Թէեւ շատ տեղեր  
Կը տեսնես գուր զայն ,  
Բայց օր մը յանկարծ  
Նա ալ քեզ նման՝  
Յորմէ որ ստեղծաւ՝  
Կը դառնայ առ յայն :



### Փիղ.

Ուշադրութեամբ դիտեցէք սա պատկերը, որ կը ներկայացնէ մեղ մեծամարմին Փիղը, տեսէք այս պատիճաւոր չորբոտանին, որ ոչ ձիու և ոչ ուրիշ կենդանւոց նմանութիւն ունի. ակռաները բերնէն դուրս ցցուած. պոչը կարճ ու բարակ. ականջները մեծ և լայն, իսկ աչքերը փոքր, որք կը փայլին և կ'իմացնեն Փիղ խորամանկութիւնը:

Մեծութեան մասին գուցէ դուք նըմանցնէք Փիղը Անգեղջիւրին կամ երկար

նապարանոց Ուղտին, բայց եթէ լաւ զըննէք, կրնաք անոնց տարբերութիւնները տեսնել: Նախ նկատեցէք որ Փղի երկարու կոր ակռաները և լայն ականջները չունին, ոչ Անգեղջիւրը և ոչ Ուղտը. թէ Եւնոցա պոչերը քիչ շատ նման են մէկ մէկու, Փիղն ունի կնճիթ, բայց նորա ոտները չունին այն խաղերը, զորս ունին յիշեալ կենդանեաց ոտները:

Փղի ակռաներն՝ որ մինչ ութսուն քաշ կը կըռեն, շատ թանկագին են:

Փիղը սուից խաղեր չունենալուն պատճառաւ չէ կարող նստիլ կամ պառկիլ, ոտքի վրայ կը ծնի նա, ոտքի վրայ կ'ապրի և կը մեռնի ոտքի վրայ: Փիղը թէ Եւն մէր կողմերը կրնայ ապրիլ, բայց տաք երկրի մէջ միայն կ'աճի ու կը բաղմանայ:

Մարդիկ Փղին վրայ փաքր անակ կառուցանելով կը նստին եւ ճամբօրդութիւն կ'ընեն: Փիղը շուտ կ'ընտանենայ եւ հլուբնաւորութիւն ունի. բայց վրէմինդիր է, երբ վնաս տեսնէ:



105.



### Փղորս .

Այժմ պատմեմ ձեզ թէ մարդիկ ինչպէս կ'որսան զօրեղ ու մէծ Փիղը : Գիտէք որ Փիղը ոլոր չունենալուն համար կարող չէ նստել . բայց քնանալու ժամանակ իր մարմնցն նեցուկ մը կ'ուզէ , որուն յենով կը քնանայ : Մարդիկ գիտեն զայս , և ասոր համար կեղծ ծառեր կը պատրաստեն եւ կը տնկեն ֆղի քնակած կողմերը . և իրենք հեռու տեղ թագտափ կը սպասեն ֆղի գալստեան եւ քնանալու ժամուն : Եւ ահա Փիղը կ'երեւի , կուգայ նեցուկ մը վինտուել քնանալու ժամուն . կը տեսնէ ծառ մը՝ որսորդին կեղծ ծառը , անհոգութեամբ կը յենու անոր , ծառը կը տապալի , Փիղն ալ-

անոր վրայ . որսորդին որ այս ամենը տեսած էր , իսկոյն կը համի և գիւրութեամբ ողջ կը բռնէ Փիղը : Եթէ ուզէ կ'ընտանեցնէ զայն , թէ ոչ՝ կը մորթէ և կը ծախէ անոր կաշին . Ճարպը և ոսկորները :

106.



### Յ տառը , Բառի սկիզբը .

Յովազ . Յորդ . Յեղ . Յաւէժ . Յաւէտ :  
Տուն մը քանի մը յարկեր կրնայ ունենալ :  
Տուն մը կը լլալ միայարկ երկյարկ ,  
եռայարկ կամ քառայարկ . . . :  
Յաջողութիւնը ձախորդութեան ընկերուն է :

Յիսուս Յարդանան գետին մէջ մլրը-  
տուեցաւ Յովհաննէս Մկրտչէն :

Յոյլ և թոյլ մարդը միշտ յուսահատական  
վլճակ մը կ'ունենայ :

### Յ տառը , Բաղմավանկ բառերու վերջը .

Տղայ . Սատանայ . Կաթսայ . Քահանայ .  
Ամեն քահանայ եկեղեցի կ'երթայ առա-  
ւոտ և երեկոյ :

Շատ գեղեցիկ էր Հարմայ իշխանի որ-  
դին Արայ :

Տղայ մը եթէ ուղէ կրնայ իր գործերուն  
վրայ խորհիլ , որպէս զի սխալելով չըլլայ  
թէ վատ գործի մէջ ինայ և յետոյ զղայ  
յակամայ , որ անօգուտ է :

Յ տառը բառերու սկիզբը իր բնական ձայնը  
կը հանէ , իսկ բաղմավանկներու վերջը չ'կար-  
դացուիր , եթէ նոքա պարզ բառեր են . յետոյ ,  
Գաթայ . Դշիոյ , և այլն :

Յ տառը ,  
Միավանիներու վերջը .

Հայ . Ճայ . Բայ . Թէյ :  
Նայ . Էյ . Պայ . Խայ :

Մեր աղքը կը կոչուի Հայ :  
Նարժում ընել ցուցնող բառերը կ'ը-  
սուին Բայ :

Տեսակ մը թռչուն կայ , որ կ'ըսուի Ճայ .  
Մտացածին էակներու կ'ըսենք Պայ :

### Յ տառը , Բառի մէջ .

Արքայական . Հայաստան . Երեկոյթ .  
Շղմայակապ . Տղայական . . . . :

Եթէ տղայ մը սոււտ խօսի և մարդ չլ-  
մանայ զայն , գիտնալու է որ Աստուծած  
կ'իմանայ . Վասն զի Աստուծոյ աչքը մեր  
սրտին գաղանի խորհուրդներն իսկ կը զօրէ  
տեսնել :

Տղայ մը եթէ միշտ խաղայ , բան չի  
սովորի :

Տղայ մը երբ կ'զգայ իր պակասութիւնը  
և կը վախնայ , այնպիսին յառաջ կը բերէ իր  
սրտին մէջ բարի յատկութեանց սկիզբ :

Տղայ մը՝ որչափի մեծնայ , զարդանայ ու  
զօրանայ և բան սովորի , պէտք է գիտնայ որ  
դեռ շատ բաներու պէտք ունի :

Յ տառը միավանկներու վերջը կը կարդա-  
ցուի , եթէ անոնք Բայ չ'են , կը կարդացուի  
և բազմավանկներու վերջը , երբ անոնք Բարդ  
են , հնդկաթէյ , գերբայ . . . :

## 107.



Մէշա յուսով ապրովը անցոյս կը մնայ :  
Կամաւ մեղանը յողը յակամայ կը զգնայ :  
Խոփը կարելի է շղթայ շննել և հրա-  
ցանը արօր :

Ուրախութեան ճամբան համբերու-  
թեան մէջն է : Համարածու լինալու յու և  
Հարստութիւնը խնայալութէան ետևնի է :

Մարդկութիւնը կրթութեան քովն է . . .  
Լցով դաստիարակութեան շուրջն է . . .  
Ծուլութիւնը անհօգութեան առջեւն է :  
Կեանքը մահու սկիզբն է :

Մահը կենաց վերջն է :

Բացատրել մօտը կամ շուրջը : Իրը տե-  
ղոյ պարագայ :

## 108.



ԵՐԱԶ ՄԱՆԿԱՆ

Մինչ մանկական յորրանիս  
Հանդարտ , անոյշ ննջէի ,  
Եւ ՚ի խորին յերազիս  
Դառն ապագայս տեսնէի . . . :

Տեսի մի վարդ պարտիզեն  
 Ոյր շուրջ ծաղեկ էր շարուած .  
 Որ նուիրէր սոխակին  
 Զիւր թերթիկներ խոնարհած ,  
 Յորժամ սոխակ վարդին բյոր  
 Առած , խակոյն անդ իջնէր .  
 Հրձուանօք տայր համբոյր  
 Եւ սիրոց երգ յօրինէր ,  
 Յայնժամ բաղէն անիրաւ  
 Վերէն՝ ի վայր իջնալով  
 Անդութ հարուած մը տուաւ  
 Հետ սոխակին ՚ի խոռով :

Երբ որ վարդը զայս տեսաւ  
 Երեսն հարաւ ՚ի գողուկ ,  
 Աւաղ , խակոյն խամրեցաւ ,  
 Շքեղ պատկերն անմեղուկ :

---

ՈՒՂՏԻՆ ԽՍԴԱԼ ՍՈՎՐԵՑՆԵԼ .

Ա .

Դուք գուցէ չուղէք հաւատալ թէ  
 Ուղոր կը խաղայ , գիտնալով նորա հաստ  
 ու կոշտ կենդանի մը վլնելն . բայց մի ըմբ  
 բոնէք նորա խաղալը իբրեւ ձեր խաղն  
 ու պարը , այլ երեւակայեցէք անկանոն

կերպով մը յաջ եւ ՚ի ձախ դառնալ , ու  
 քիչ մ' ալ սստոստել , որ դարձեալ բաւա-  
 կան բան է Ուղար նման անշնորհ չըրքո-  
 տանւոյ մը համար : Սա եւս նշանակեցէք  
 որ՝ Ուղար չխաղար կամաւորապէս իր հա-  
 ճոյից համար , այլ՝ մարդիկ կը խաղացնեն  
 զայն և անով կը գրօննուն :

Այժմ պատմեմ ձեղ թէ ինչպէս խա-  
 ղալ կը սովորի Ուղոր : Բայց յառաջադոյն  
 զննենք Ուղար մարմինը , որպէս զի նորա  
 կազմութեան վրայ լաւ տեղեկութիւն ու-  
 նենանք :

Ուղոր կենդանեաց որ կարգէն կը  
 կարծէք . նա չորբոտանի է , կ'ուտէ խոտ ,  
 երբեմն ալ խմոր , խմորն ալ բաղադրեալ  
 խոտ մ' է :

Ուղոր ձիու նման սմբակ չ'ունի , ոչ ալ  
 եղիւր , ունի մսալի թաթեր , որք երկուքի  
 բաժնուած են ոչխարի կճղակներուն նման ,  
 Ուղոր թաթահերձ է :

Ուղոր շատ ջուր կը խմէ և ուշ կը ծա-  
 րաւի , այս պատճառաւ շատ յարմար է  
 անջրդի անապատներու մէջ զայն գործա-  
 ծելլը :

---

## Բ.

Գիտեմ դուք շատ հետաքրքիր եք իմանալու թէ ի՞նչպէս խաղալ կը սովորեցնեն Ուղտին . ահա պատմեմ ձեզ զայն և դուք լաւ մտիկ ըրէք :

Արաբացիք Ուղտին խաղալ սովորեցնելու նախատակաւ գետինը տաք մոխիք կը ցանեն , Ուղտին աչքերը կապելով կը բերեն զայն տաք մոխրին վրայ և կ'ըսկին թմբուկ զարնել և Ուղտը պտացընել : Ուղտը քանի մը քայլ առնելէ յետոյ կ'իմանայ տաքութիւնը , մէկ երկու քայլ եւս՝ ոտները կ'ըսկին սասատիկ տաքնալ , այրիլ . ի՞նչ ընէ , աչքը չ'տեսներ , տաքութեան չրդիմանար , կ'ըսկը այս և այն կողմը վազել , ցատկել եւ ոստնուլ , բայց պախուցը տիրոջ ձեռքն է , նա չըթողուր որ Ուղտը զոլ գետինը կոխէ մի քանի վայրկեան : Հուսկի յետոյ պաղ գետինը կը քաշեն Ուղտը , աչքերը կը բանան եւ թմբուկի ձայնն ալ կը կտրեն , առաջին դասն է այս :

Այսպէս չորս կամ հինգ անգամ ամեն օր կը շարունակեն Ուղտին պարի դասը , և որովհետեւ Ուղտը սրամիտ է և չըմոռնար իրեն տեսածն ու պատահածը . կը յիշէ որ ,

ոտներն այրել կը սկսին ճիշդ այն պահուն՝ երբ թմբուկի ձայնը կը լսուի . ուստի երբ պաղ գետնի վրայ իսկ փորձի համար տիրոջը զարկած թմբուկը կը լսէ , կը սկսի ցատկել . որ ապացցը է թէ Ուղտը խաղալ սովորած է , և այնուհետեւ հասարակութեան առաջ խաղցընելով քանի մը փող կը շահին վարժիչները :

## 109.



## ԵՐԳՈՂ ԵՒ ԽԱՂԱՅՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Ամեն կենդանի իր յատուկ խաղն ուղօսունքը կամ երգը ունի . ինչպէս , Արտոյտը . կատուն , գառնուկը , և գեռ շատերը , որոց խաղան ու երգելլ բնական է :


իսկ կան կարգ մը կենդանիք եւս, որոց  
մարդիկ կը սովորեցնեն նորանոր խաղ եւ  
երգ :

ինչպէս արջը, որօւն խաղալը կարելի է  
տեսած էք և աւելի կապիկը, որ բաւական  
յարմարութեամբ կրնայ պարել, զինուորի  
նման կարող է սուր շարժել, հրացան լե-  
ցընել և պարպել, հարսի մը պէս աւել,  
սպառաւի նման քալել և դեռ շատ խեղիա-  
տակ բաներ ընել :

կան երգող թռչուններ, որոց բնական  
երգերուն վրայ կրնանք աւելցընել և մեր  
ուզած երգերը անոնց սովորեցնելով : Այս  
կարգի թռչուց գլխաւորն է սովորակը, ապա  
արտօյարը, գեղձանիկը և դեռ ուրիշներ :

Կայ թռչուն մ'ալ որ փոքրիկ մանկան  
նման կարող է բառեր թոթովել, և այս է  
թռւթակը, որ մինչեւ հաղար դահեկան  
արժեքով կը ծախուի, երբ բաւական խօսք  
սովորած լինի :

## 110.



## ՀԱՆԵԼՈՒԿ

Ոչսար է վրան,  
Գոմէշ է տակը .  
Մէջը հնդձիւղեան՝  
Եղբարց տնակը :

Արծիւը սրատես թռչուն է .  
Գայլը հեռատես գաղան մ' է .  
Զուկը լողացող կենդանի է .  
Բաղն ու Սագը ձուկ չեն, բայց կը լողան .  
Օձը խորամանկ սողուն է .  
Մեղուն թռչուն չէ, բայց կը թռչ .  
Ոչսարը սակաւախոհ կենդանի է .  
Բադին ձագը ծնած օքը կը քալէ, բայց  
ապռաւին ձագը, նոյնպէս և աղաւնեակը

Հեն կարող գէթ եօթնեկէ մը յառաջ ա-  
ռանձինն պատսպարուիլ :

Սոյն վերի դասին մէջ պէտք է կրկնուին  
բոլոր այն գիտելիքները, որք աւանդուեցան  
ցայս վայր :

Սկսէ՛ առաջին բառէն, արծիւ՝ և բառի  
վերջը իրը էւ. սրատես՝ առաջին վանկին մէջ  
բնական ը. երկրորդին մէջ է՝ տառի ձայնը  
բազդատէ՛ բառերու սկիզբը գտնուած է ձայ-  
նին հետ :

Թուչուն, ու՝ բաղաձայնէ առաջ. մ'է. ա-  
պաթարց՝ փոխանակ և տառի. լողացող առա-  
ջին և վերջին վանկերու մէջ ։ տառը՝ բառի  
մէջտեղը և այլն և այլն և այլն :



Ա դուրսնի ժամանակ պատկի  
կառա ու այս օնուն պատ միջամ  
կա մասր և ոճրաց որու մի առաջաւ

## 111.



## ՃԱՄԱՆԱԿԻ ԲԱԺԱՆՈՒՄ

Վաթսուն բոսէ կը կազմեն մէկ վայրկեան.  
Վաթսուն վայրկեան կը կազմեն մէկ ժամ.  
Քսանչորս ժամեր ։ օր ։ օր .  
Եօթն օրեր ։ օր ։ Եօթնեակ  
Երեսուն օրեր ։ օր ։ ամիս .  
Տասներկու ամիս ։ օր ։ տարի .  
Տասն տարի ։ օր ։ դար .  
Հարիւր տարին ալ դար կը կոչուի :

## ԵՕԹՆԵԿԻ ՕՐԵՐԻ

Կիւրակէ առաջն օր Եօթնեկին .  
Երկուշաբթի երկրորդ օր ։ օր .  
Երեքշաբթի երբորդ օր ։ օր .

Չորեքշաբթի չորրորդ օր Եօթնեկին.  
Հինգշաբթի հինգերորդ 〃 〃 .  
Ուրբաթ վեցերորդ 〃 〃 .  
Կաբաթ Եօթներորդ 〃 〃 .

Եօթնեակը Եօթն օրերէ կը բաղկանայ,  
իսկ տարին ունի երեքհարիւր վաթսուն և  
հինգ օր :

## 112.



## ՏԱՐՈՒԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Գարուն .	Ամառ .	Աշուն .	Զմեռ .
Գարսւնն ունի երեք ամիս Մարտ , Ապրիլ ,			
			Մայիս :
Ամառն	"	"	Յունիս , Յուլիս ,
			Օգոստոս :
Աշունն	"	"	Սեպտեմբեր ,
			Հոկտեմբեր , Նոյեմբեր :
Զմեռն	"	"	Դեկտեմբեր ,
			Յունիլար , Փետրվար :

Տարուց առաջին ամիսը Յունուարէն  
կ'ըսկսի , որն է Երկրորդը . . . Երրորդը  
. . . . և այլն :

## Ա.Մ.ՍՈՅ ՕՐԵՐՈՒ ԹԻՒԾ

Յունուար	ունի	31	օր :
Փետրուար	ունի	28	կամ 29 օր :
Մարտ	"	31	" :
Ապրիլ	"	30	" :
Մայիս	"	31	" :
Յունիս	"	30	" :
Յուլիս	"	31	" :
Օգոստոս	"	31	" :
Սեպտեմբեր	"	30	" :
Հոկտեմբեր	"	31	" :
Նոյեմբեր	"	30	" :
Դեկտեմբեր	"	31	" :

Պէտք է գիտնալ որ այս ամիսները  
Հունվարեցւոց ամիսներն են և ոչ Հայոց .  
բայց հիմայ Հայերն ալ այս ամիսները կը  
դորձածեն :



ՀԱՅՈՅ ԱՄԻՍՆ ԵՐԵ

Հայերն ունին 13 ամիս . որոց 12ը ունին 30 ական օր , իսկ մէկ հատը՝ վերջին ամիսը ունի 5 կամ 6 օր . Հայոց ամիսներն են ,

Նաւասարդ . Հոռի . Ասհմի . Տրէ .  
Քաղց . Արաց . Մեհեկան . Արեգ .  
Ահեկան . Մարերի . Մարդաց . Հրոտից  
և Աւելեաց :

Հայերն ամսոց ուրիշ բնական անուններ ալ ունին .

Զարդին . Ծաղկին . Մարդին . ( Գարուն )  
Հնձար . Տօթար . Մրդար . ( Ամառ )  
Կթօն . Թառմօն . և Միգօն . ( Աշուն )  
Զիւներ . Սառներ . Մրրկեր . ( Զմեռ ) :



113 .



ԶԲՈՍԱՆՔ

“ Զբօսանքը աշխատող տղայոց համար վարձատրութիւն մ’է ” կըսէ վարժապետը . և իրաւի վարժարանի մէջ՝ բաւական աշխատենէս վերջ հրաման կուտսյ մեզ պարտէղ երթալ խաղալու . եւ ինքն ալ մօտէն կը հսկէ մեր վրայ :

Գիտէք մենք ի՞նչ կընենք , ամեն տեսակ խաղ կը խաղանք : Մեր ընկերներէն Արքահամ , Մերկէր , կարապետ և Յակոբ գնտակ կը խաղան . Խաչատուր , Սմբատ , Արիստակէս և Յարութիւն ըռւան կը ցատկեն . Արշակ եւ Արմենակ հոլ կը դարձնեն . իսկ Վահրամ և Վահան բերդագրաւ կը խաղան ուրիշ ընկերներով : Դաւիթ շատ անդամ քնարահարութիւն կ’ընէ եւ Սարգիս իր

փողը կը հնչեցնէ . Արտաշէս՝ որ թէեւ  
փոքր է , բայց լաւ մարմնամարզութիւն  
դիտէ . նցնպէս Պօղոս և Միհրան . իսկ եւ  
բոլոր խաղերու մէջ յաջողակ եմ :

114.



Գ. Ա. Բ Ո Ւ Ն

Գարնան երեք ամիսները խիստ ախոր-  
ժելի և հաճցական են . սաստիաշունչ քա-  
միները կը դադրին , ձիւներն արդէն հալած  
անհետացած են . հազիւ բարձր լերանց  
գագաթները ձիւն կը նշմարուի . ծառերը  
կը ծաղկին . խոտերը կը բուսնին , վարդերը

կը բացուին , թռչուններն ու գառնուկները  
երամ երամ կը ճշվան և կը մայեն մարդա-  
գետնի և ծառոց վրայ . պարտէզները եւ  
դաշտերը նոր հարսի պէս կը զարդարուին  
դցնզգցն , Արեւը կը փայլի վերէն , առ-  
ուակն ալ նորա ձառագայթներով կը փալ-  
փլի . գեփիւռը իբր խունկ անուշահոտ իր  
հոսմամբ կը զուարթացնէ ամեն բան . կար-  
ծես տիեզերական հարսանիք մը կայ :

Գարունն եկաւ և հալեցուց ձիւն ու սառ ,  
Նոր կեանք առին կարծես հողէն դաշտ  
ու սար .

Կանաչացան այգի պարտէղ գեղեցիկ ,  
Վերադառձան պանդուխտ թռչունիք  
երգեցիկ :



## 115.



Ա. Մ Ա. Ռ

“Ամառն կարծես գեղեցիութեան մասին  
կը գերազանցէ գարունը . քանզի պտուղ-  
ներն մասամբ հասած են , մասամբ կը սկսին  
հասուննալ . մարդիկ ծովեղերքը կամ ուրիշ  
գիւղեր ամառանոց կ'երթան . գարնան անձ-  
րեւներն դադրած են , դաշտեր կանաչ ու  
գեղին զգեցած են , իսկ մարդիկ սովորաբար  
ձերմակ : Շատ զրւարժակի է այս եղանա-  
կին լճերու կամ գետակներու մէջ լողանալ .  
յետոյ քիչ մը ձուկ բռնելով տուն դառնալ :  
իրաւի , հաճոյից եղանակ մ' է ամառը , և  
այս պատճառաւ է կ'արծեմ որ՝ վարժարա-  
նաց արձակուրդներն ամառը կը լինին սո-  
վորաբար ” . կ'ըսէր խաչատուր իւր հօրը :

Արեւը վերէն կը փայլի պայծառ ,  
գործի ժամանակ ամենի համար !  
Մշակի բարեաց սկիզբն է ամառ ,  
Եղանակ սիրուն բերքով անհամար .

## 116.



Ա. Շ Ո Ւ Ն

Աշնան հետզհետէ օդերը զովանալով  
տաքէն գանգատողները կը դադրին :  
Այգեպանները կը սկսին այգին կթել .  
մեծ ու փոքր տղայք ձեռք ձեռքի տուած  
կը վազեն այգին , աւելի զբունաց համար  
քան այգեկութի . բայց անուրանալի է որ  
փոքրիկներն ալ բաւական կ'օգնեն մեծե-  
րուն , թէեւ աւուր քանի մը ժամերը ծա-

ուոց շուրջը պարելով կ'անցնեն, հոգ չէ  
թող պարեն, դեռ անոնց կատարելապէս  
աշխատութեան ժամանակն հասած չէ:

Տես ծառոց վրայի գեղեցկատեսիլ թարմ  
պտուղները, անոնց շուրջը գառձող թրու-  
չունները. որչափ ուրախութիւն կը պատ-  
ճառեն մանկանց:

Բայց ահա Երկինք կ'ամպոտին, անձրեւի  
նշան է. սակայն մի վախնաք դեռ ձմեռն  
եկած չէ, և դուք բաւական օրեր ունիք  
դքսնելու:

Վ արձքը տրուեցաւ քրտանց մշակին,  
Պտղաբաղն է այն, այգւօյն, պարտիզին.  
Լցան ամբարներ, առաս է տարին,  
Նիստ, կեր ու խմել, փառք տուր

Արարվն:



Յ անձակ միախ ցը ցը մարտաք մարտաք  
Յ անձակ միախ ցը ցը մարտաք մարտաք  
Յ անձակ միախ ցը ցը մարտաք մարտաք  
Յ անձակ միախ ցը ցը մարտաք յա մարտաք  
Յ անձակ միախ ցը ցը մարտաք յա մարտաք



## ԶՄ Ե Ռ

Խոժոռ դիմօք արագապէս հասաւ սառ-  
նաշունչ ձմեռը, դաշտ և սար, ձոր և ան-  
տառ, թռւփ ու մացառ և ամեն բան ծած-  
կեց խոր սպիտակ վերարկուով. թափեց  
ծառերու տերեւները, քանդեց թռչնոց  
բոյները. թռչունք ալ երամ, երամ փախան  
գնացին, և չեն դառնար նորա մինչեւ որ  
ձմեռը չ'մեկնի մեր երկրէն:

Ձմեռը մեղալ բաւական վեասեց, հի-  
մայ առաջուան նման արձակ համարձակ  
չ'ենք կարող գուրս վաղել. պէտք է հա-  
գուստով լաւ պատսպարուած լինմք որ  
չպաղենք, արդէն երկար ժամանակ չենք

## 117.

կարող դուրս մնալ, ինչու որ ցուրտն իս-  
կոյն կ'ըսկսի մեր քիթ ու ականջները կար-  
մրցընել, մեք ալ շատ պէտք չ'ունինք դուր-  
տ մնալու, հինգ, տասն ձիւնագնտակի հա-  
րուածներ բաւական են :

Թուշնոց երամներ գաղթեցին ՚ի տար,  
Սաստկաշունչ քամին փչէ անդադար.  
Ծառեր մերկացան զարդեր գոյնգդայն,  
Երկիրն ալ ագաւ ձմրան վերարկուն :


### Հ Ա Ր Ց Ա Ր Ա Ն

Տարին քանի՞ ամիս, օր և եղանակ ունի :  
Ամիսը քանի՞ օր ունի և օրը քանի՞ ժամ :  
Հայերը քանի՞ տեսակ ամիսներ ունին :  
Որո՞նք են իւրաքանչիւր եղանակի ամիսները,  
Ի՞նչ կուինի Գաղնան, Աշնան, Ամռան,

Զմրան :



Խաղաղ ազգ զամար մայ և մայուս  
Հայութ զամ զիմանց զաման  
Տար անուն քանի մաս մատուցուան ան  
Տար ան ճի ։ Ճիրի անուան բարայ զիմ  
Յի միմի անուանուան ան խոսուան  
Յա մանեան երարդի մայ զաման



### Զ Գ Ա Յ Ա Ր Ա Ն Ք

Չեռք. Աչք. Բերան. Ականջ. Քիթ :

Գառնուկը կը տեսնենք աչքով և ձեռ-  
քով կը շօշափենք. ականջով կը լսենք նո-  
րա ձայնը. քթով կ'զգանք գառնուկին վը-  
րայ անհաճոյ նուրբ հոտ մը և երբ մոր-  
թենք զայն բերանով կ'ուտենք անոր միսր :

Ուրեմն ձեռքերնիս շօշափելու զգայա-  
րանք է, աչքերնիս՝ տեսնելու, բերաննիս  
ուտելու, ձաշտկելու, ականջնիս լսելու  
իսկ քթերնիս հոտոտելու :

Ի՞նչպէս գիտես թէ վարդը կարմիր է  
և անուշ հոտ ունի : Ի՞նչպէս կ'զգաս մեղրի  
անուշութիւնը : Ի՞նչպէս կ'իմանաս թէ Ե-  
կեղեցւոյ կոչնակը կը զարնեն : Բամբակի թե-  
թեւ և փափուկ ըլլալն ինչով կը հասկնաս և



# Ենթամնայ . . .

կամ նշան տողադարձի :

Ենթամնայ ըսուածը սա նշանն է որ  
շատ անդամ կը պատահի դասագրքի մէջ  
տողին վերջը . այս նշանը պատահմամբ դը-  
րուած չէ , այլ ցուցնելու համար թէ բա-  
ռը պակաս է եւ անոր մնացորդ մասը դը-  
րուած է յաջորդ տողի մկիզը :

Հետեւեալ բառերը բաժնեցէք Ենթամնայով .  
Խւրաբանչիւր բառ իր վանկերու թիւէն մէկ  
անդամ պակաս կարելի է բաժնել , քա- համայ  
կամ քահա- նայ . որ եռավանկ է և երկու կերպ  
միայն կը բաժ- նուի . Միավանկերը չեն բաժ-  
նուիր :



Օ Բ Ի Ն Ա Կ

Գագաթ , Խնձոր , Այգի , Արեւ , Մե-  
ղաւոր , Մարգարէ , Իմաստուն , Երանելի .  
Եպիսկոպոս , Վաճառատուն , Հայ , Եօթ-  
նեակ , Արտմոնիլ , Թագաւոր , Արի , Բարի ,  
Բարեկենդան , Զարութիւն , Առաքելական ,  
Զուր , Եղջիւր , Բյու , Կաթողիկոսութիւն ,  
Աշխարհ , Ընկղենի , Զգալ , Շտեմարան ,  
Երանդ , Երկաթուղի , Ոդապարիկ . . . . :

# ԾՆՈՒՆԴ ՔՐԻՍՏՈՍԻ

Աբգարու օրովը մեզ լոյս ծագեցաւ ,  
Անտանելի լոյսն աշխարհի երեւցաւ .  
Նախ հովիւներ տեսան , աշխարհը ալ  
տեսաւ .  
Աստուած յերկնից իջաւ , մանուկ  
ծնեցաւ :




# ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Սուրբ կարապետու օրովը մեծ գուռ  
բացուեցաւ ,  
Երկնիքի լոյս գուռը , մեզ լոյս ծագեցաւ .  
Աղաւնակերպ Հոգին յերկնից երեւեցաւ ,  
Բոսւ “ Դա է՝ որուն Աստուած հաւ .  
նեցաւ ” :




# ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Հրովդէսի օրով Երկնիքը սոսկաց ,  
Քարեր պատառեցան , Երկիքը գողաց .  
Անմեզ Ձիսուս Խաչին վրայ զոհ գնաց ,  
Վասն անթիւ մեր անօրէն յանցանաց :



118.



Երուսաղէմի մօտ Գողգոթայ լեռան վերայ խոչեցին Հրէայք զՅիսուս։ Երկու աւազակիներ եւս նորա հետ խաղուած էին։ Յիսուսի ձախակողման աւազակը խաչի վրայէն կ'լսէր Յիսուսի, թէ դու Աստուած էիր։ Ինչո՞ւ չես ազատեր զբեզ և զմեզ։

Աջակողմեանն պատասխանեց, թէ մեք մեր յանցանաց պատիժը կը կրենք իսկ նա ԲՇՆԸ ըրած ունի։ Այն ժամանակ ըստ Յիսուս, աջակողմեան աւազակին, «Դու այսօր փլրկուեցար»։



## Ա. Պ. Հ Ե Ս

Զանազան գործեր և զբաղումներ որոցման մարդիկ միշտ կը պարապին, արհեստ կը կոչուին։

Հաստ հարկաւոր է մարդոց արհեստ գիտնալը։ արհեստ շունեցող մարդու վիճակն ապահովեալ չէ։

Զանա որ ուսումնէ յետոյ արհեստ մը սովորիս։

Հաստ տեսակ արհեստաներ կան։ որոց գլխաւորներն են։ Երկրագործութիւնն, Դարբնութիւնն, Հիւմութիւնն եւ Ոստայնանկութիւնն։



ով զմ ան ան, բնակչութեան մաս մարդիան  
շնչ ու առ այս գեղագ պատճեաց քահանցան,  
ու առաջ առ առ առ առ առ առ առ առ առ  
այս գուց առ առ



## ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

### Ա.

Երկրագործ կը կոչուի այն արհեստա-  
ւորը, որ երկրը կը մշակէ անոր մէջ բոյ-  
ուել ցանելով կամ անկելով։

Երկրագործ գետինը կը հերկէ արօրօվ,  
և բաւական ժամանակ արեւու տաք ձա-  
ռագայթներուն տակ կը թողու հերկած  
գետինը, որ հողը լաւ մը փիսրի, և ապա  
անոր մէջ կը ցանէ կամ կը անկէ ու զած  
բոյուր։ Երկրագործ արօրին կը լծէ զոյգ  
մը եղ կամ ձի, իսկ եթէ գութանով ու-  
զէ վարել կորթ գետինը, այն ժամանակ  
գութանին պէտք է լծէ չորս կամ վեց զոյգ  
եղներ կամ գոմէշներ, վասն զի գութանը  
հողին մէջ աւելի խոր մտնելով առաւել ցի  
հարի կը լինի զայն վարելու։

Գութանին և արօրին ստորին մասը՝ որ  
հողին մէջ կը մտնէ, երկաթագործը կը  
շնչ է. իսկ միւս փայտեայ մասերը կը շնչ  
հիւսնը, երբեմն ալ երկրագործը կը շնչ  
այդ փայտեայ գործիքները։

Երկրագործը գիւղերու մէջ կը բնակի  
և մշակական գործերէ զատ անասնապա-  
հութեամբ ալ կը զեաղի, այսինքն կը պահէ  
անասուններ ալ, ինչպէս են, գոմէշ, եղ,  
կուլ, ոչխար, այծ, ձի, եշ և ջորի. որոց  
մէկ քանին կը գործածէ վարու ցանի ժա-  
մանակ, իսկ ոմանց ալ կաթն ու բուրդը  
կ'ըստանոյ, կարող է այդ կենդանիները  
շատցնել և վաճառել շահու համար։

Աշխատասէր մարդու համար երկրա-  
գործութիւնը ամեն արհեստներէն արդար,  
հանդիսաւ և շահաւոր է։



120.



ՅԱՆ

Բ.

Հերկուած արտի ցանելու յարմար ժամանակին երկրագործը գոգնոցին մէջ ցորեն լեցնելով կը մտնէ արտը, և ափով կ'ըսկոի ցրցքնել ցորեանը ակօս, ակօս պարսելով արտին մէջ, մինչեւ որ ամբողջ արտի երեսը սերմով ծածկուի։ Յետոյ կը լծէ արօրը և հերկուած ու ցանուած արտը անդամ մ՝ ալ կը հերկէ, բայց այս գործողութիւնը՝ խառնելու համար է. վասն զի, եթէ սերմը հողին երեսը թողունախիր երկրորդ՝ թուշունները կուտեն զայն, ուստի պէտք է սերմը հողին տակ՝ խոնաւ մասին մէջ ծածկել որ ծլին։

Սերմը հողին մէջ խառնուեցաւ, բայց արտին մակերեւոյթը խորտ ու բորտ է, ուղղ բարձրացած են հողակցուեր, ուրիշ

տեղեր ալ փոքրիկ խորեր կ'երեւին. որք եթէ այդպէս մնան, մասամբ անջուր պիտի չորնան, մասամբ ալ խոնաւութենէ պիտի փտուին։

Երկրագործը կը մտածէ որ ցած տեղերը ջրով լեցուելով միշտ խոնաւ պիտի մնան, իսկ ասոր հակառակ բարձր կցաներն ալ արեւի տակ միշտ չոր պիտի մնան. որով անհաւասար վիճակի մէջ պիտի մնայ սերմը, այս օդտակար չէ. Բնէ կ'ընէ երկրագործը, նա ձեռք կ'առնէ տափանը, որ ձիւղերով հիւսուած պարզ գործիք մ'է, կը լծէ անոր զոյտ մը եղ. եթէ տափանը թեթեւ է, քանի մը քար կը դնէ վրան և յառաջ կը մղէ եղիները, արտին մէկ ծայրէն մինչեւ միւսը կ'երթայ ու կուգայ այսպէս, ուզած ժամանակը կարող է ինքն եւս տափանին վրայ ելնել, բայց եղները միշտ կը քալէն, և երբ լրանայ գործը, արտին երեսը գեղեցիկ երեւոյթ մը կ'առնէ, ամեն կողմ հարթ և դուր. ցաքանի կամ տափանի ձիւղերուն հետքերն ալ տող տող կ'երեւան, կարծես թէ հողագոյն կապերտով մը ծածկուեցաւ արտը։ Այժմ ցանքը լմնած է։

Բ ՈՒՍԱԿ լուսակ առ աղքան  
խնի զանգն պատու , մասն ո դրաս ժեզ  
խնի ։ Եմ Երանաւու առ պատու , մասն

**Գ**անուած հատիկները ժամանակ մը կը<sup>1</sup>  
քնանան հողին մէջ . յետոյ կ'արթննան և  
կ'ըսկսին ծլիլ . ծիլերը կ'աճին և ցողուններ  
արձակելով դէպ ի'վեր կը բարձրանան , որոց  
գագաթներուն վրայ կ'երեւին հասկեր . ա-  
հա ասոնց մէջն է ցորենը :

Երկրագործը տեսնելով որ արտը շատ  
խիտ ծածկուած է հացարցոսվ , կը գուշակէ  
թէ բերքն առատ պիտի լինի . շատ կ'ուրա-  
խանայ և կ'երգէ .


**Ո**ն , աճեցէք սիմ փոքրիկ ցորեաններ ,  
Եւ լցուցէք իմ գետնափոր ամբարներ .

**Ա**ղօթեմ ես , ինձ հետ և դուք թռչնոց  
տարմ ;  
Որ իմ բերքէս առնուք եւ դուք բաժին  
թարմ :

Ես ցորենով կը կերակրեմ աղքատներ ,  
Ամեն ազգի կարաւան ու ճամբորգներ .  
Անով միայն կուտամ իմ պարտք՝ ու հարկը ,  
Զի նա միայն է իմ ձեռաց վաստակը :

Յետոյ ուրախ զուարթ տուն դառնալով  
կը պատմէ թէ ինչպէս առատ պիտի լինի

**Հ**ասկը : այս բարի լրսն վրայ ամենքն ալ  
կ'ուրախանան մեծ և պղտիկ , մանչ և աղ-  
ջիկ , հարուստ և աղքատ , բնիկ և օտարա-  
կան , փերուզակ և վաճառական . վասն զի  
այդ ապագայ հասկէն ամենն ալ բաժին ու-  
նին , ինչպէս և մենք :



**Հ Ա Ս Կ** կոծոք ազգութ  
հանց վ ողջան ու այսմայլուր ինքուի  
մահապատճեն զարգաց ուս վր մասնի

Օր աւուր կ'ուռաձանայ հասկը . կը գեղ-  
նի և գլուխը գետին խոնարհեցնելով պար-  
զակէս կ'իմացնէ ցորենոյ առատութիւնը .

իսկ երբ թեթեւ քամին վրայէն անցնի ,  
ոսկեայ ծովակի մը նման վէտ վէտ կը ծփայ .  
և մեղմիկ շղին մը կը լսուի . միւս կողմէն  
կ'իմանաս հազարաւոր միջատներու շնկոցն  
ու բղզոցը . որբ կարծես կ'աւետեն քեղ  
թէ՝ « Ցորենը հասեր է » :

Երկրագործն այս ամենը գիտէ եւ կը<sup>2</sup>  
տեսնէ , նա արգէն մանգաղ և գերանդի

սրած ու պատրաստած է . և ահա իւր եղբարց , որդւոց եւ այլ մշակաց ընկերութեամբ ներս մոտաւ արտոր արդէն . գերանդի և մանդաղ կը փայլին , յետ ու յառաջ կը շարժին , իսկ բայսերն արմատաքի ըլլալով կարգաւ կը պատկին ետեւէ ետեւ : Քաղն է այս :

Քաղէն յետոյ գեռ գործ ունի անխոննջ հողագործը . փռուած ցողունները կը ժողվէ . և մաս մաս կապելով որայ կ'ընէ , որայով կը կազմէ մեծամեծ գեղեր , զսրս կալը կը կրէ . հոն կը կասու՝ այսինքն կը կամնէ ցորենը : Կամնելու գործողութիւնը գրեթէ միշտ փոքրիկ աղջիկներն ու մանչերը կ'ընեն . վասն զի շատ զուարձալի աշխատութիւն մ'է .

ՀԱՅՈՒՄՆ ԿԱՄ ԵՐՆՈՒՄՆ

## Ե.

Ցորենը կամնուած է , որով հատիկները հասկերէն դուրս ելած են և ցողունները յարդ գարձած են . պէտք է յարդը ցորենէն շատել . բայց քամին պիտի կատարէ այս գործը : Աստուած կը դրիէ քամի , երկրագործը բազմաթիւ ընկերներով հոսելի ՚


ձեռին կուգայ թեղին գլուխը . արագ արագ կ'երնէ թեղը . քամին ալ ցորենը թեղին մօտ թողրով յարդը կը հեռացնէ ցորենէն և կ'անցնի ուրիշ կարօտեալներու օդնելու . որը իրեն կը պատեն : Հոսումն աւարտած է : Ա. յժմ երկրագործը ինքզինք գործէն աղատած կը համարի . միայն փոքր հաշիւ մը ունի . բերքի տասանորդը կուտայ կառավարութեան . աշխատաւոր մշակաց իրաւունքը կը վճարէ . քահանայից բաժինը կը նուիրէ . աղքատաց եւս առատ ողորմութիւն կուտայ . թուշունք արդէն իրենցն առած են և գեռ քանի մը պարագայներու մէջ ալ պիտի առնեն . իսկ մնացեալ մասը գետնափոր ամբարներու մէջ կը լեցնէ խրնամով և կը պահէ . յարդն ալ յարդանոցը կը տանի կը լեցնէ . որով պիտի կերակրէ իր կենդանիներն ամբողջ ձմեռը :

Ա. շխատասէր երկրագործն այսպէս ամեն բան կարգի գնելէ յետոյ կը հաշուեոր , տուած բոլոր տուքերէն զատ , իր ցանած սերման տասնապատիկը շահած է . առատ ուտելիք ունի եւ Աստուծոյ ողորմութեամբն ամբողջ ձմեռը հանգիստ պիտի ապրի :

ԵՐԿՐՄԱԳՈՐԾԻ ԳՈՀՈՒԹԻՒՆԸ

Աստուած լսեց մեր աղօթից ձայն արդար,  
Փոխան մէկի տուաւ հարիւր ու հազար .  
Փառաւորեմ ես իմ Տէրը անդադար ,  
Որ խնամէ մեզ պահպանէ դարուց դար .  
Աստուած կ'օրհնէ միշտ աշխատանք  
գործողին ,

Բայց չ'սիրեր ծովերն՝ ինկած յանկողին .  
Կը վարձատրէ աշխատութիւն մշակին ,  
Բայց կը մերժէ անդործ հաւատ դանդաղին .



121.



ՎԱՆԿԵՐՈՒ ԲՍՋԱՆՄԱՆ ՎՐԱՅ

Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Բառերու առաջին տառը կրնաց ըլլալ  
թէ՛ ձայնաւոր և թէ բաղաձայն . ինչպէս ,  
Այր . Ծայր . Արի . Բարի . Ալիս . Մասիս :

Բայց բառերու իւրաքանչիւր վանկերը  
բաղաձայնով կ'ըսկիմն . զորօրինակ ,

Ա բա բատ . Սու կա ւէտ (<sup>1</sup>) . Լեռ ներ .  
Գա ւամթ . կա բա պետ . նու նե նի :

(1) Ի տառի համար կանխաւ ըսուած է , թէ երկայն  
(ձայնաւոր և բաղաձայն) է այն : Բարդ բառերը այս կա-  
նախն տակ չեն . որոց մէջ կից ձայնաւորներ կան . ինչպէս ,  
Մի ակերպ . Եղմի ածին . Թի ա վա բել . Լի ա կա տար .  
Մի օրինակ . Զի ա ւոր . . . . .



Գարնան վերջերն էր, որ մը աղուէ սը գնաց արածելու . յանկարծ որտորդի շներն յարձակեցան անոր վրայ . աղուէ սը հազար և մէկ ձարպիկութեամբ հաղիւ կարողացաւ շներու ձեռքէն աղատիլ : Փախաւ , գնաց բարձր լեռան մը վրայ , ուր ապահով եղաւ թէ այլ եւս զինքը հալածողներ չկան : Շատ անօթի էր յոգնած կենդանին . մօտակայ ծառին վրայ ագռաւ մը տեսաւ , որուն բերանը մեծկակ կտոր մը պանիր կար . աղուէ սը վազեց ծառին տակ և վեր նայելով լսաւ ագռաւին . “Ովքաղցրաձայն ագռաւ , քսնի օրէ ՚ի վեր հիւանդ էի , շատ հիւանդ . բժշկին գնացի եւ նա ըսաւ որ – Պէտք է ամենաքաղցր ձայն ունեցող թռչնոյ մը երգը մը տիկ ընես որպէս զի առողջանաս – այն օրէն ՚ի վեր բոլոր թռչնոց ձայնը քննեցի և հաստատ իմացոյ որ քու ձայնդ շատ ախորժաւ

լուր և քաղցր է . արդ կը խնդրեմ , սրտառուչ երդ մը ձայնէ որ բժշկուիմ ու : Ագռաւը քիչ մը մտածեց , բայց երբ աղուէ սը կրկին թախանձեց , բերանը բացաւ և սկըսաւ երգել . բայց պանիրը վար ինկաւ զօրանմիջապէս կերաւ խորամանկ աղուէ սը ,

---

### ԴԱՐԲՆՈՒԹԻՒՆ

Գարբնութիւն կը լսուի երկաթեայ գործիներ և կահեր ու չենքեր յառաջ բերող արհեստին . այս արհեստն ունեցողը դարբին կը կոչուի :

Գարբինը կը չինէ արօրի երկաթը – խոփ , շղթայ . նոյնպէս կացին , ուրագ , գակուրագ , ասպանդակ , ասպար եւ գեռ շատ տեսակ երկաթեայ շննուածներ :

Դարբնի գործոյն նիւթն է երկաթը . գուք գուցէ լսած լինիք թէ երկաթը մետաղէ , զոր հողին մէջէն կը հանեն խառն ուրիշ նիւթերով . գործարաններու մէջ հալելով այդ նիւթը կը զտեն երկաթը :

Ամեն մետաղ երկաթի նման հողէն կը հանուի , և կը զտուի : Մետաղ մը պէտք է

կուանուելու , Երկննալու , լայննալու և բարակնալու յատկութիւններն ունենայ . Եւ այս ամենը կը լինի կրակի միջոցաւ :

Մետաղ են , ոսկի , արծաթ , պղնձ , կապար . . . . : Կան ուլիչ նիւթեր ալ որք հողէն կը հանուին , բայց մետաղներու վերայիշեալ յատկութիւններն չունին . ասոնք են , աղ , պաղլ'զ , բորակ , քար եւ այլն , որոց հանք անունը կուտանիք :

---

### 123.



ԱՌԱՋՆՈՐԴ ԱՔԼՈՐԾ

Ա .

Երկու խեղճ մարդեր  
Գիշերանց ելան ,  
Մէկ մէկու ընկեր  
Ուղեկից եղան :

Ասոնք կուգէին  
Որ գիւղէն քաղաք  
Շուտով երթային  
Գնելու ապրանք :

Զի Երկու օր վերջ  
Մի մեծ փեսաւեր  
Խրենց գիւղի մէջ  
Պիտի կատարուեր :

Գացին ու գացին ,  
Գիւղէն հեռացան .  
Գաշտը թողուցին ,  
Զորի մէջ մոան :

Քիչ մ' ալ գնացին  
Զորէն գուրս ելան  
Ճամբան կորուսին ,  
Մոռցան ամեն բան :

Բ .

Խոտեցան խոխւ  
Խոտերու վրան ,  
Ըրին շատ հաշիւ  
Գտնելու ճամբան :  
Չունէին լապտեր  
Լուսատու մթին  
Բայց ասի հոգ չէր ,

Զի աստղք լցոս տային :  
 Զ'կար եւ ճամբորդ  
 Որ ճամբայ ցոյց տար ,  
 Եւ ոչ առաջնորդ  
 Խեղձերուն համար :  
 Ա. յսպէս մոլորած  
 Խորհին դարման .  
 Մին ըսաւ յանկարծ ,  
 “Ես գտայ ճամբան” :  
 Միւսը խընդաց ,  
 Ըսաւ “Ո՞ր կողմն է” ,  
 Եւ աչքը յառած  
 Կեցաւ որ ցուցընէ .  
 Բայց նա չէր գտած  
 Ճամբան՝ որ յայտնէ  
 Ա. յլ դարման խորհած՝  
 Որ ճամբան գտնէ :  
 Վասն որոյ ըսաւ ,  
 “Ծնկեր , դառնանք գեղ .  
 Առնունք մեր ճետ հաւ ,  
 Եւ բերենք այս տեղ :  
 Նա մութ լցոս չ'ունի ,  
 Ճամբան կը գտնէ .  
 Եւ մեզ կը տանի  
 Քաղաք կը խօժէ” :

Ընկերը խնդաց .  
 Ըսաւ . “Լաւ գտար ,  
 Ուստի սրնթաց  
 Գնա՛ աքլորն առ :  
 ——————  
 ♫ .  
 Հնարագէտը  
 Ետ դառցաւ ՚ի տուն .  
 Բոնեց խեղձ ճետը ,  
 Մինչ նա կոյր ՚ի քուն :  
 Բերաւ ընկերին  
 Ըսաւ , “Օն ահա ,  
 Գնենք ՚ի գետին ,  
 Որ գտնէ ճամբայ” :  
 Խեղձ հաւը մութին  
 Զէր կարող տեսնել .  
 Ուր մնաց խենթին  
 Առաջնորդ լինել :  
 Քնթալժախ աքլորն  
 Ա. չերը խփեց .  
 Չնայած բոլորն  
 Առուշիկ քնեց :  
 Երկու խենթ ճամբորդ  
 Հա՛ կըսպասէին ,

Որ մեծն առաջնորդ  
Կը գտնէ ուղին :  
Սակայն երբ տեսան  
Որ օգուտ չ'կայ ,  
Շատ սրանեղեցան ,  
Աքլորին վրայ :  
Եւ խիստ ամաչեց  
Աքլորին աշբը  
Երբ չ'կատարեց  
Աքլորին իր դերը :

## Դ.

Կեցան ու կեցան ,  
Սպասեցին շատ .  
Ապա միաձայն  
Վճռեցին հաստատ ,  
“Մեզ խարեց Աքլորն .  
Չ'գտաւ ճամբան .  
Ուստի զայն պատժելն ,  
Արժան է , արժան ” :  
Հսկին ու ըստին ,  
Աքլորի վզին  
Դանակը դրին  
Հանեցին հոգին :

Աքլորը մեռաւ ,  
Առաւոտ եղաւ ,  
Խենթերն ալ ելան ,  
Չ'գիտեմ նոր կորան :

ԱՐԻՍՏՈՆԻՑ ԵՒ ՀՈՒՓՍԻՄՑ

## Ա.

Շատ շնորհալի մանուկներ էին Արիստոնիմէ և Հռիփսիմէ . օր մը սոքա երբ վարժարանէն տուն կը գտանային , տեսան փոքրիկ մանուկ մը՝ որ ճամբան նստած կուլար . քսը և եղբայր կանգ առնելով հարցուցին մանկան լալուն պատճառը . փոքրիկը յայտնեց նոցա թէ զբոսանքի պատճառաւ անէն դուրս ենելով հեռացած էր անկէ , և ապա բոլորովին կորուսած էր թէ տունը և թէ տան ճանապարհը : Մեր երկու այցելուները հարցուցին մանկան անունը , մականունը և բնակած թաղը . հասկըցան թէ գիտեն մանկան տունը , և խորհուրդ ընելով երկու քը մանկան երկու ձեռքէն բռնած ճամբայ ինկան զայն իր տունը

տանելու : Հասան փնտռած տեղերնին ,  
դուռը զարկին և մանկիկը յանձնեցին իւր  
մօրը . նորա մայրն արդէն կը փնտռէր  
մանուկը , զոր երբ գտաւ շատ ուրախացաւ  
և ուզեց փաքրիկ բարերարները վարձատ-  
րել գոնէ քիչ մը շաքարեղէն տալով անոնց .  
բայց անոնք յայտնեցին , թէ մարդասիրական  
պարտականութիւն մը կատարոծ ըլլալիուն  
համար չեն կարող վարձատրութիւն ընդու-  
նիլ և մեկնեցան :

---

## Բ.

Յայտնի է որ մեր բարերարները բաւա-  
կան ժամանակ կորուսանելով սովորականէն  
ուշ հասան տուն . մայրերնին զայս իմացուց  
նոցա և յայտնեց թէ այս յապաղման հա-  
մար յանցաւոր են . տղայք շուտարեցան .  
բայց նոցա դիմաց վրայ յայտնի կը տեսնը-  
ւէր անմեղութեան փայլը . նոքա բոլորովին  
վստահ էին իրենց չքմեղութեան վրայ .  
բայց կը մտածէին թէ ի՞նչ կերպով պէտք  
է խօսիլ մօրը և ով պէտք է խօսի . վերջա-  
պէս Արիստակէս՝ որ թէեւ տարիքով իր  
քրոջմէն փոքր բայց աւելի համարձակ էր ,

յայտնեց ըրածնին եւ ըսաւ նաեւ թէ .  
“ Եթէ այս գործին մէջ պակասութիւն մը  
կայ , յանցանքը իմս է . քոյրս անմեղ է ո :  
Մայրը լսելով իր զաւակաց մարդասիրական  
գործը , շատ ուրախ եղաւ , գեղեցիկ պատ-  
կերներով վարձատրեց զանոնք . եւ ըսաւ  
որ պէտք է միշտ այնպէս բարեսիրտ մնան ,  
որով թէ Աստուծոյ և թէ մարդկան սի-  
րելի կը լինին :

Այսպէս բոլոր մանկունք իրենց փոքր  
հասակէն սկսեալ երբ նուազ առ նուազ  
բարեգործութեանց վարժուին . իրենց մէջ  
հասակին մէջ ալ կատարեալ բարեգործ  
մարդիկ կը լինին :

---

Որմնադիր մը աշխատած ատենը դիպ-  
ուածով բարձր տեղէ մը վար ինկաւ մար-  
դու մը վրայ և զայն յախամայ մեոցաւց .  
մեռնողին տղան դատ բացաւ որմնադրին  
դէմ : Որմնադրին տղան հօրը կողմանէ դա-  
տարան ներկայանալով ըսաւ . “ Ես կը կե-  
նամ այս տղին հօրը տեղը և նա իմ հօրս  
աշխատած տեղն ենելով թողինայ վրաս  
եւ լուծէ իր վրէմբը ճիշդ այն կերպով ,  
որով հայրս յակամայ մահուան պատճառ

Եղաւ : Դատարանն արդէն իբր մարդառապան չէր նկատած որմնադիրը : Հանգույցելոյ որդին երբ լսեց այս վտանգաւոր առաջարկը . ետ կեցաւ իւր դատէն , և որմնադիրն ազատեցաւ :

Խ Ա Ա Տ

Ի՞նչ որ քեզ համար չես ուղեր , ուրիշի մի ըներ : Բաց աչքոյ որ պակասութիւններդ տեսնես և ուղղես զանոնք :

Ականջներդ բաց պահէ այլոց բարի գործերը լսելու , որպէս զի անոնք բարի օրինակ լինին քեզ : Փակէ ականջներդ զրախօսութեանց , հայհյանաց և բամբասանաց գէմ : Երբէք մի ջանար ինքզինքդ գովելու , եթէ գովելի գործ մ' ալ ունենաս : Անձնագովութիւնը նպատակի միջոց չկրնար լինիլ :

Գործերդ քեզ կը գովեն արժանեացդ համեմատ : Կենցաղալարական ամեն պայմաններու և պարտականութեանց մէջ ճըշդապահ եղիր :

Պատիւն ամեն բանէ թանկէ , լսա գլւնահատէ զայն :

Պատուաւոր վնասն անպատիւ շահէն լսւէ :

Զանա ձանչնալ քեզ եղած շնորհաց յարգը . որպէս զի աւելի շնորհաց արժանի լինիս :

Ժամանակն ոսկի է , շռայլութեամբ մի վատներ զայն . զի նա երբ անհետի , այլ եւս չդառնար :

124.



Ա Մ Պ Ե Ւ Ծ Ա Ղ Կ Ո Ւ Ն Ք

Ամպը կ'անցնէր դաշտերէն ,  
Անցյշ ծաղկանց վրայէն .  
Քնքոյշ ծաղկունք ձայնեցին ,  
Անցնող ամպէն ջուր խնդրեցին .  
Ամպը լսաւ “ Արնթաց  
Կ'երթամ , ջուր տալ պարախզաց ” :

“Մեզ բաւ է մեկ կայլակը”  
Բսաւ հեղ մանուշակը .  
Անգութ ամպը անհաւան ,  
Անցաւ գնաց իւր ճամբան ,  
Ծաղիկները նցն ժամուն .  
Գունատեցան խիստ դժգոյն :

ԺՈՂՈՎ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵՆԴԱՆԵԱՅ

## Ա.

Բոլոր կենդանիք խորհուրդ ընելու համար որոշեալ տեղ մը հաւաքուեցան մի օր .  
որպէս զի մարդոց զրկանքներէն և անոնց ձեռքէն ազատելու միջոց մը գտնեն : Այս ժողովը ներկայ էին հզօր Առիւծը . կատաղի վագրը . մեծամարմին Փիղը . երկայնապարանոց Ուղարք . սրատես Գայլը . թաւամադ Արջը . թեթեւագնաց Եղջերուն . արշաւող Զին . սրարշաւ Զայլամը . տոկուն Զորին . յամառ Եշը . անխոելք Ոչխարը . մորուսաւոր Այծը . խեղիատակ Կապիկը . հնարագէտ Աղուէսը . շատակեր Խողը . խորամանկ Օձը . վախկոտ Նապաստակը . հաւատարիմ Շունը . ապերախտ Կատուն . վայրախտ Կաշաղակը . երգեցիկ Սոխակը .

անգործ Բղէզը . ոստոստուն Գորտը . քսու Մուկը և գիշերաշրջիկ Զղջիկը , որ թեւեւրուն կեռերէն ծառի մը միւղէն կախուած կը միափէր թեթեւ կերպով . և դեռ զանազան կենդանիք ջրային ու ցամաքային , որք մեծ մարամք եկած էին որոշեալ նպատակին ծառայելու , ոմանք ալ լոկ հանդիսատես գտնուելու նպատակաւ :

## Բ.

Երբ կենդանեայ հոծ բաղմութիւնը ժողովեցաւ դաշոր , մարդն ալ դադոնի գնաց անոնց ետեւէն և ծածուկ կը դիտէր այս արտասովոր գումարումը . կենդանիք կարձ վիճաբանութենէ մը յետոյ Առիւծն իրենց ժողովյն նախագահ ընտրեցին , որ իւր զօրութեամբ և դարաւոր ազդեցութեամք կարող էր ՚ի հարկին սանձել ժողովը անկանոնութիւնն , եթէ երբէք պատահէր :

Առաջին անդամ ազուէտով խօսք ուղեց , ստացաւ՝ եւ սկսաւ խօսիլ այսպէս , “Տէ՛ր Առիւծ , Բնչ պատճառաւ կամ իրաւամք , Տարդ ըսուած կենդանին երկար դարերէ ՚ի

վեր մեծ ատելութեամբ զինուած է մեզ  
դէմ . զմեղ կը հալածէ , կը չարչարէ եւ  
կ'ըսպաննէ . գեռ երէկ գաւակներու մայր  
աղուէս մը թակարթով բռնեց նարէլ . այսօր  
դնտակով առիւծ մը սպաննեց նարէլ . և այս  
ժամուս երկու կենդաննեաց մորթերը մուշ-  
տակ շնուրու կ'աշխատի նարէլ . մհ , ինչ  
անիրաւութիւն . . . ըսաւ և քանի մը կեղծ  
արտասուաց շիթեր գլորեց աչքերէն . Առ-  
իւծը գլուխը բարձրացնելով “ իրաւունք  
ունիս ” ըսաւ , խօսքն Աղուէսին ուղղե-  
լով : “ Իրաւունք ունի ” գոչեցին զանազան  
խառնաշխոթ ձայներ :

“ Տէր առիւծ , կրկնեց աղուէսը , խօսք  
կ'աւարտեմ , բայց լաւ նշանակեցէք . թէ-  
մարդիկ որչափ կը ցանկան ձեր վոեմու-  
թեան ոսկեփայլ եւ թաւամազ մորթէն  
մուշտակ հագնիլ . . . . Առիւծը մոնչեց .  
ոմանք ոռնացին , թռչունք թեւերնին թա-  
փահարեցին , միջամբ բզզացին . իսկ կապիկը  
խնդալէն մարելու վրայ էր , երբ Առիւծը  
թաթը գետին զարնելով “ Լոռութիւն ”  
գոչեց , և այնպէս եղաւ :

Հայք առաջայի զմէն առաջայի զմէն . Երիշ  
կարգութ զարդ մինարժէն նարուց դրա

ապիճան ըսրայն Նորանիան առաջ ցի  
ու ա զի ըսրայն Նորանիան առաջ ցի

## Փ :

Աղուէսին յաջորդեց կաղ ձի մը , որ  
ծանրաբայլ յառաջ գալով լսու . “ Մէր ծար-  
տասան աղուէսը լսւ , բայց պակաս խօսե-  
ցաւ : Մարդիկ չեն բաւականանար կենդա-  
նեաց հասցնելով այն չարիքները զրու թը-  
ւեց նա , այլ առաւել անտանելի կացու-  
թեանց կենթարկեն զմեղ . նայեցէք եւ  
տեսէք զիս . Մարդն երկար տարիներ ամեն  
կերպ ծառայական տաժանելի գործերով  
մաշեցուց կեանքս . վրաս հեծաւ նա  
պատերազմի , զբոսանքի եւ այլ հաճո-  
յից ժամանակ . շալիեցի ես զինքը , ժա-  
մերով , օրերով և եօթնեակներով պտրտ-  
ցուցի զայն . քաշեցի նորա կառքը , սայլը  
եւ արօրը , կրեցի նորա բեռները ուր որ  
ուղեց . շատ անդամ սաստիկ արեւի և անձ-  
րեւի տակ անհանգիստ և անքուն ու անօ-  
թի մնալով միշտ ծառայեցի նմա , բայց  
երբ ծերացայ , ոտքս իր բեռներուն տակ  
կատրեցի , այլ եւս երեսէ ձգեց զիս մոռ-  
նալով իմ գարաւոր ծառայութիւններս ,  
և ուղեց զիս մորթել միսկ կաշի ալ ձեռ-  
նէս կորդելու , մտադրութեամբ . գեռ ու-

բեշ փաստ հարկաւո՞ր է մարդոց անիրաւութեան : “Այդպէս է, զռաց էշը և աւելցուց, ըստիշեց մեր ձի եղբայրը մարդոց մի մեծ զբկանքն ալ . որ բնութեան մեջ պարգեւած դալար խոտերն ալ իրենք կուտեն, որով խեղճ խոտակերս գարնանային թարմ ուտելիքէն կը զբկուինք, ով Առիւծ, տես մի անգամ ոտքիս տակի երկաթեայ հողաթափը, ամեն օր կը մաշի այն և ամեն օր կը նորոգուի ոտքերէս արիւն վաղելով . վիճակիս ծանրութեան երկաթ իսկ չը դիմանար . երեւակայէ դու կացութիւնս . գթութիւն, գթութիւն “ ըստ եւ լրեց էշը : Այս, գթութիւն գոչեցին ձի, եզ, կով և ջորի : Առիւծը թաթը վեր առաւ և լուսութիւնը տիրեց :

**Մէկ մ'ալ այծ և ոչխար կոտոշ կոտոշչի սոււած մէկը մօրուքը՝ միւսնալ դմակը շարժելով յառաջ եկան և իշղն կերակրոյ մասին ըրած դիտողութիւնը կրկնեցին : Ասոր վրայ բոլոր մասկեր կենդանեաց ծիծաղը լոսուեցաւ : Ապա Գայլը հրապարակ գալով**

առանց խօսք ուղելու, ըստ “ Իբրեւ պաշտպան իմ անձիս, եւ տէր այլ տկար կենդանեաց, ինչպէս ոչխարին, այծին, գառնուկին, և այն . կը բողոքեմ եւ ես մարդոց դէմ, և կ'առաջարկեմ անմիջական պատերազմի սկզբնաւորութիւնը ” :

Դոզաց այծը այս պաշտպանողական յայտարարութեան վրայ : “ Այս պատերազմոց գոչեցին երբեմն կենդանիք, և դարձեալ լուեցին . իսկ առիւծը մտիկ կ'ընէր :

Պոչը շարժելով նազելամեմ յառաջ եկաւ կատուն . առիւծին մօտեցաւ եւ իր ընական ապերախտութեամբն սկսաւ գանցատիկ մարդոց ձեռքէն, նոցա թռչնոց դէմ գործած անիրաւութեանց մասին : Զայս որ տեսան աղաւնի, ձնձողուկ, սարեակ և ծիծեռնակ, շատ զարմացան . ինչպէս զարմացած էին այծն ու ոչխարը գայլին զիբենք պաշտպաննելուն համար : Մինչդեռ կատուն թռչուններու դատը կը պաշտպանէր, “ Հապա վին, ողջ ողջ կուտեն ո ձայնեց ոստրէն . “ ձեշդ է ո գոչեցին ձկունք, բաղէ, արծիւ և արագիւ :

Յառաջ եկաւ հաստաբուն Փիղը պատիճը շարժելով և ըստ, “ Որչափ որ մարդիկ մեղմէ շատերը կը ծառացեցնեն իրենց,

ինչպէս և զիս, բայց և այնպէս մեզմէ շա-  
տերուն ալ պաշտպան կը հանդիսանան, մեր  
թշնամեաց գէմ, եւ . . . . . այս միջացին  
շուկ մ'էր փրթաւ ժողավականաց մէջ, և  
շատերու դիմաց վրայ յայտնի երեցան  
դժգոհութեան նշաններ. միջը լռեց, եւ  
երբ կը մեկնէր, “Թող լւէ՞ ո՞, գոշեց արջը.  
“Պատանձէ՞ ո՞, պօռաց գայլը, “Լաւ խօսե-  
ցաւ ո՞, հաշեց շունը, և դեռ այլ և այլ  
կենդանիք ըստ տեսակի ձայներ հանելով  
կը գատէին փղի կարծիքը. բայց կապիկը  
կ'ըսէր, “Ըստածին պէս է՞ ո՞. եւ Ասիւծը  
“Լոռութիւն ո պօռաց. ամեն բան իր կա-  
նոնական լիճակին ստօցաւ:

Ե.

Հուսկ յետոց Հունը խօսը առնելով  
ըստ, “Կը հաստատէմ Փիլ բարեկամի  
գիտողութիւնը. ստոցդ է որ մարդ ըստած  
կենդանին իր օգուտներն եւս ունի մեզ.  
կարծուածին չափ վնասակար չէ նա, եւ  
ուունաց “Լոռութիւն ո գոշեցին հանդի-  
սականաց մեծագոյն մասը. Հունը լռեց:  
Յանկարծ բամբառակ կապիկը մագլութ

ծառի մը բարձրիել Ճիւղին վրայէն նշան  
տուաւ թէ պիտի խօսի. աչքերը բացաւ,  
գոցեց. պոչը աջ ու ձախ. վեր և վար շար-  
ժեց և դէմքն ու մարմինը ծռմկելով խօ-  
սելու արտօնութիւն ստացաւ, եւ ըստաւ,  
Վլարոններ, այսօր մեք առանց ցեղի խըտ-  
րութեան հաւաքուած ենք աստ խիստ կա-  
րեւոր ինդրով մը վրաղելու, ներկայ խընդ-  
րցն կարեւորութիւնը դուք ամենքդ ալ  
դիմուք արդէն. մեզմէ ամենազօրաւորէն  
մկնեալ մինչ ամենաստկար միջառը պարտա-  
կան է յանուն իրաւանց և աղատութեան  
իր խելքի տիրածին չափ խորհիլ այս մասին  
եւ ձեռքէն եկածն ընել իւր խորհուրդն  
իրագործելու, որ ամենուս խորհուրդն է.  
բայց ի մէկ երկու անխորհուրդ խորհրդա-  
տուններէ. մեք ամենքս մի զամբաց ցանկու-  
թեամբ վառուած պէտք է սպառենք խելք  
և ջանք մինչեւ մեր յաղթահակն տանինք  
մարդ կենդանւոյն վրայ. այս է իմ կարծիքը  
գործերնուո հիման վրայ ո ըստ և քիչ մը  
լռեց կապիկը. “Կեցցէս ո գոշեցին ժողո-  
վականք միահաղոյն. եւ կապիկն աւելի  
բարձր Ճիւղի մը վրայ ցատկելով շարունա-  
կեց. “Այժմ կը մնայ մեզ խորհիլ մեր մեծ  
ձեռնարկի դիւրութեան վրայ եւ գտնել

այն պիսի միջոց մը , որով կարենանք անվիշտ համանիլ մեր նպատակին . հոգ չէ թէ մեզմէ սմանք չպիտի հաւանին խօսքերուս , ինչպէս մեր Պ . Շունը , որ պարանոցն փայլուն անուր մը կրելուն համար իբր նշան գերութեան , մարդը կուզէ պաշտպանել . բայց եւ այնպէս մեք կարեւորութիւն չ'տալով այդպիսի աննշան դէպքերու կ'անցնինք մեր գործին ” : “ Ապրիս ” գոչեց Առիւծը . “ Ճշմարիտ է ո մշաւեց կատուն . “ Սատկիս ” կանչեց շունը : Իսկ կապիկը քրտինքը սրբելով շարունակեց . “ Ես կ'ըսեմ որ մարդիկ մեզ՝ չորբուտանեացս նմանելու մեծ փափաք ունին . ապացոյց են ըստիս . ըդ մեզ սպաննելով մեր մորթերէն մաւշտուի շնել և հագնելնին . ոմանց ալ սմբակաւորներու նմանիլ ուղելով մուձակ անունով կաշեայ սմբակներ սաքերնին անցընելնին . և որ առաւելն է շատ մարդիկ Այծի նմանիլ ցանկալով իրենց ծնուրի ստորին մասը մօրուք մը կը մշակեն . ոմանք մեր մեծ . նախագահին նմանելու տենչանօք մօրուք նին գերծելով պեխեր միայն կը պահեն . իսկ ոմանք ալ , որ աւելի խելացի կարծուածներն են , ինձ նմանելու համար պեխեր և մօրուք կ'ածիլեն . ահա այս ամենք մարդոց

մեղ նմանելու մեծ փափաքանաց ապացոյց են . . . . , ժողովականիք կապիկի վերջին խօսքերու և նմանութեանց կրոյ սկսան լիաբերան խնդալ . իսկ հաւանք կամացուկ բարձրանալով դէպ ՚ի կապիկին կեցած ճիւղը նորա պոչէն խածնելով այնպէս ուժգին քաշեց որ , կապիկը դիախժաւալ գետին ինկաւ և սուր ճիւղը միայն արձակեց , ասոր վրայ իրար անցում մը տեղի ունեցաւ ժողովականաց միջեւ , եւ առիւծը աեսնելով որ իր լոեցուցիչ ազգարարութիւններն չեն լսուիր արձակեց ժողովը ուրիշ յարմար առթիւ մը եւս մնացեալ մասն ամբողջացրնելու նախառակաւ , եւ բոլոր կենդանիք մեկնեցան :

### Ա. Ռ. Ա. Կ. Ն. Ե. Բ

Ով որ հանդարտ կ'երթայ , շատ և հեռու կ'երթայ :

Աշխատութեան սկիզբը փուշէ , իսկ վերջն անուշէ :

Ամեն աշխատող նպատակի մը կը ցանկայ . յարատեւ աշխատանքը միայն անոր կը մօտենայ :

Ամեն բան քիչով կը շատնայ :

ՏՐԵՅ ԵՒ ՄՈՒՃԾԿ

Տրեխը նախանձելով մուճակին, որ իրմէ բարձր տեղմբ խնամօք գրուած էր, ըստ անոր “ հարեկամ, ինչպէս ես նյժեպէս և դու եղան կաշիէ շինուած ռաքի ամաններ ենք, ինչու համար արդեօք դու այդքան բարձրերը կը բնակիս, եւ ես գետինները կը մնամ” : “ Ոյդ բանին շատ զարմանք հարկաւոր չէ ” լսաւ Տրեխը, “ Որովհետեւ ես վերջին ծայր կրթութեանց ենթակայ եղայ, զանազան վիճակներէ և աստիճաններէ անցոյ և կազմապարներու զարնուեցայ. այսափ չարքաշութենէ վերջ հարկ կը որ քեզմէ վեր բարձրանայի, մինչ դու հում կաշիէն կտրուելով Տրեխ դարձար ” :

Դ Յ Ծ Բ Թ Ա Ա Ա

ՁՅՅ

Ա Մ Ա Ռ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Խ Ո Տ

Համատարած ափուած էր իւր տաք ու փայլուն ձառագայթները գեղեցիկ արեւը. գոյնդդոյն թռչունք միահազոյն դպրու թռչուած իրենց բայնէն կ'ողջունէին այն գեղեցիկ առուրդ գալուստն, արտերու անհա-

մար բայսք և գաշտերու գունագեղ ծաղկունք լերանց պաղարթմախիս ծառոց հետ հանդիսաւես էին թռչունց ուրախութեան. իսկ առաւոտեան բալըրահոս սիւքն մեղմելով արեւու տաքութեան ազգեցութիւնն, որպէս բռւսոց ու թռչունց նօյն պէս և մարդկան համար, կը փօմէր զայն մի բարեխառն կիմայի . օդոյ զավութիւնն զգալի էր ամենութեք : Ոդչ շրջակայքը ուրախ ու փայլուն, սրանչելի և սիրուն տեսքով զարդարուած էին : Դաշտը երկու մասերու կը բաժնէր նորա ձիշտ մէջ տեղէն անցնող օձապտոյտ գետը, որ մերթ փայլուն ու հանդարտ և մերթ փրփրալից ու գտհավէժ ընթացքովն հաղորդ կը լինէր զինքը շրջապատող կենդանութեան :

Ա Ռ Ա Ռ Ն Ե Բ

Հայութը այս և այս միանձն

Բամբասանք ընողը լեզուն իսկ մոխի ընողը ականջէն կախելու համի մամբ

Այլոց բարիք ընող մարդը, երբ կը մէ մարդիկ ապերախտ են, իւր ապերախտ լինեն կը յայտնէ :

Գորտը ձկան հետ չընկերանար . զի մին  
կը պոռայ միւսը ձայն չ'տար :  
Գեղեցկութիւնն է շատ անգամ շնչաւոր  
արձան և հրաւիրակ կորստեան :

Ձախորդութիւնը քուրայ մ'է . յորմէ  
կ'ելնէ մարդ կամ ցնդած և կամ զոռւած :  
Չ'օգնող բարեկամն ու չ'վնասող թշնա-  
մին հաւասար են :

Կինը նման է փեճեկաւոր պտղայ , որոց  
փառութիւնը դրսէն յայտնի չէ :

ՈՐԲ ՄԱՆՈՒԻ ԿԸ

Փոքրիկ խաչատուր , որ հօրէ որբ մնա-  
ցած էր , որ մը հարցուց իւր մօր , ըսելով  
— Մայրիկ , ինչո՞ւ հայր չ'ունիմ ես .

— Հայրդ մեռաւ , զաւակս , ըսաւ մայրը .  
— Ինչպէս մեռաւ .  
— Գետին մէջ խեղդուելով .  
— Ինչո՞ւ գետը մտած էր .  
— Գետի միւս կողմն անցնելու համար .  
— Ի՞նչ կար գետի միւս կողմը .  
— Քաղաքը , ուր կ'երթար գործի .  
— Կամուրջ չունէր գետը .

— Ունէր , բայց աւելի շուտ հասնելու  
համար չէր ուզած մինչեւ կամուրջն եր-  
թալով ժամանակ կորսնցնել . եւ լողալով  
անցնիլ փորձած էր :

— Ավանս ըսաւ խաչատուր , եթէ կա-  
մուրջն անցնէր հայրս հիմայ ողջ պիտի  
լինէր :

Ա. Ղ.

Աղը մի տեսակ հանք է , որ կը գործա-  
ծուի հացն ու կերակուրը համեմելու հա-  
մար : Հանքային աղէն զատ կայ եւ ջրային  
աղ , զոր կ'ըստանան մարդիկ աղի ջրերէ :

Աղը խօնաւութեան մէջ կը տամկանայ ,  
խկ ջրոց մէջ կը լուծուի , և կը համի . լու-  
ծեալ աղը կարելի է վերստին թանձրացըր-  
նել ջուրը շոգիացնելով :

Աղը ջուր խմելու գրգիռ կուտայ մար-  
դոց և անասնոց :

Աղը շատ պաղ բնութիւն ունի , այս  
պատճառաւ տաքէն շուտ աւրուելիք բա-  
ները աղի մէջ դնելով ապահով կը պահէն :  
Զիւնը աւելի՝ գժուար կը համի , երբ  
աղով խառնուիր մատումն պղը նոր

Զուրը աւելի դժուար կ'եւայ , երբ  
մէջը աղ ունենայ :

ՀԱՆԵԼՈՒԿԱՆԴԱԿԻ ՅԱՅԱ

Մարդկան սիտանի իր մ'է շողազաւն ,  
Ուր որ գտնուի , կ'աղդէ ամենուն .

Չունի նա բերան , կ'ուտէ անընդհատ .  
Կերնէ ամեն բան , օդ , քար , փայտ , երկաթ .

Ի՞նչ որ ուտէ նա , դեռ անօթի է ,  
Զի շուտ կը մարսէ , ի՞նչ որ ալ ուտէ .

Որչափ կերակրի , այնչափ զօրանայ ,  
Խսկոյն կը մեռնի , թէ նօթի մնայ :

Չունի ոոք , ձեռք , թեւ , ամեն տեղան  
կ'երթայ ,

Մարմինն է թեթեւ , դժուար կը վերնայ .  
Նա չքնակիր խոնաւ տեղերը ,

Բնաւ չսիրեր , ծովին ու գետերը :

Նա կ'ասպի օդով , հովին է նորա կեանք ,  
Մեռանի հողմով , ջրէն չիք փրկանք .

Չմրան , գիշերուան թագաւորն է նա ,  
Անով մարդ հանգիստ և տեսք կ'ըստանայ :

Թէ նա չլինի , նօթի կը մնաս ,  
Թէ քիչ շատ մօտի , կրուայ մեծ վեաս .

Թէ շատ փնտեռ զայն , գիշերը կը գտնես ,  
Կամ երբ ձմեռուան օրերը մտնես :

ՅԱ ՊԱՐՄԱՆ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ  
մախաց մասու , անուն զիշու մասու  
քրթմաց վանց զավարութիւն : մասու քրթմա

Երեքը թուայ անուն է . որ կը կաղմուի  
Երեք մէկերէ . ըսել է թէ երեքը հաւա-  
սար է . երեք մէկերու . և կամ երեք մէկե-  
րու կը շնուի երեքը . որ է երեք թիւը :  
Երեքը հաւասար է նաև . մէկ երկութիւն և  
մէկ մէկի . բայց չըլլար ըսել մէկ մէկի և  
երկու մէկի :

Երեք թիւն իբր շափաւոր քանակ ըն-  
դունուած է այլ և այլութեան մէջ . և է  
նշան ամբողջութեան :

Երեքն է թիւա անզոյդ . կը բամնուի ե-  
րեք մասերու ամբողջու հաւասար կեր-  
պով , իմկ երկութիւն չբամնուիդ ոյիշեալ  
եղանակաւ :

Երեք տղայք ձամբան գտան տոպրակի  
մը մէջ 30 ընկոց . տղայք ընկոցները մէ-  
ջերնին բամնեցին զարին զըմարտին իւ  
իւրաքանչիւրտղայք բանի ընկոց պատա-  
և ի՞նչ մեաց :

Երեք տղայք ձամբան գտան տոպրակի  
մը մէջ 30 ընկոց . տղայք ընկոցները մէ-  
ջերնին բամնեցին զարին զըմարտին իւ  
իւրաքանչիւրտղայք բանի ընկոց պատա-  
և ի՞նչ մեաց :

Քիչ մ' ալ յառաջ գնացին տղայք եւ  
տեսան ուրիշ մանուկ մը , որուն Յական  
ընկոյզ տուին : Այս վերջինը քանի ընկոյզ  
սոսացաւ :



## Զ Ա Ր Դ

Զարդ կ'ըսուին կարդ մը իրեղէնք , որոյ  
կը ցանկան մարդիկ առանց անհրաժեշտ  
պէտք ունենալու . և կը գործածեն զայնս  
լոկ վայելութեան համար : Մարդիկ աշաց  
հաճելի երեւոյթ մը , գեղեցիկութեան նշոյլ  
մը յառաջ բերել կը ջանան զարդարակոոլ :

Զափաւոր զարդարանք մը՝ երբ վայել-  
չութեան է պատճառ , Եթէ ներելի համա-  
րուի , չափազանցը բոլորովին աներելի է  
և միասակար :

Զարդն երբ չափազանց է , յառաջ կը  
բերէ մեծամեծ ծախսեր , որբ պատճառ Են  
նիւթական անկման եւ աղքատութեան ,  
ապա՝ սնանկութեան վարկի և պատույ :

Զափաւոր զարդը ձաշակի ծնունդ է ,  
իսկ չափազանցը՝ մոլութեան :

Չատ զարդարուիլ սիրող կամ զարդա-  
րուող մէկը չէ պատույ արժանի :

## Տ Ի Ե Զ Ե Ր Ք

Ով Հայր երկնաւոր  
Երկնի եւ երկրի ,  
ի՞նչ կանոնաւոր  
Եւ սքանչելի  
Սահմանեցիր կարգ ,  
Դրիբ կանոնի  
Բոլոր տիեզերք ,  
Որ խօսքովդ ապրի :

Արեւ ու լուսին  
Եւ աստղեր պայծառ ,  
Իրենց պաշտօնին  
Կը ծառայեն յար .  
Կարդաւ կը շվին ,  
Չեն առնուր դադար ,  
Գիշերոյ մթին  
Լոյս տան վառ ՚ի լառ :

Օդ , ջուր կենարար  
Օդին մէջ թռչուն  
Չուկ վտառ , վտառ  
Դրիբ ՚ի ծովուն .  
Բոյս եւ կենդանիք ,  
Եւ դեռ անհամար  
Տուիր մեզ բարիք  
Ով Հայր բարերար :

Հ Ա Յ Թ Ե Ն Ի Ք

Մարդոց բնակած տեղերը՝ չէն, գիւղ,  
աւան, գիւղաքաղաք, քաղաք կամ՝ մայրա-  
քաղաք իրենց հայրենիքը կը կոչուին :  
Մարդիկ պարտաւոր են իրենց հայրենիքը  
կամ ծննդավայրը պահել, պաշտպանել և  
գեղեցկացնել ապրելով անոր մէջ, հայրե-  
նիքը տան մը նման մէկ կամ երկու մարդոց  
ուժիհական չէ. նա կը պատկանի իւր մէջ  
բնակող ամեն անհատի :

Մարդիկ երբեմն կամ ապրուստ գըտ-  
նելու՝ երբ ազքատ լինին, եւ կամ աւելի  
գրամ շահելու համար՝ եթէ հարուստ են,  
օտար երկիրներ կ'երթան և առժամանա-  
կեայ բնակութիւն կը հաստատեն այն տե-  
ղերը. այսպիսիք ուր որ ալ լինին պան-  
դուզտ կը կոչուին. և ինչ վիճակի մէջ ալ  
գտնուին, միշտ կը մաշին իրենց հայրենեաց  
և հայրենակցաց կազուովը :

Չատ գժուարակիր կեանք մ' է պան-  
դիսութիւնը :

զախար ան ապի  
զախար ան ապի  
զախար ան ապի  
զախար ան ապի

Ա Ռ Ա Ծ Ն Ե Ր

Կեցիր հրացանին ետեւը, ձիուն առ-  
ջւեւ և սեղանին մէջ տեղը :

Գովէ յիմարը որ խաղաղացնես. թէ  
ոչ բոլորովին կը յիմարացնես :

Գոյ բերնին եւ բաց աչքին, չարիք  
թիւ կը պատահին :

Շտապող հարցման .

Ուշ տներ պատասխան :

Ուրիշ գործն մի արհամարհեր,  
Երբ չես կարող լաւագոյնն ընել:

Ա.Չ.Բ., ԱԿԱՆՉ., ԲԵՐԱՆ

Տեսնել մի փութար, ամեն կատարուած.  
Երկու աչքերդ են ձիշդ գէ մքիդ առաջ :

Զյգ ականջ ունիս յաջ ու ձախ կողմանց՝  
Զանանաւ լսել. լոկ աչքիդ չ'տեսած :

Աչքէն, ականջն վար դասաւորուած,  
Ունիս մի բերան զյգ դրամբ փակուած.

Մի խօսիր բնաւ քո բոլոր գիտցածն :

ԱՂՅՈՒԹԻ  
ԱՌ Ս. ՀՈԳԻ

Եին փառաց նշոյլ անշէջ  
Ամենազօր Սուրբ Հոգի .  
Մերժէ խաւար մեր պատերէն ,  
Առէն ՚ի մեղ միտք բարի :  
Օրհնել երգով զԱրքայն փառաց  
Ի սուրբ քնար տասնազի ,  
Որ միշտ անեղ է և անմահ  
Տէրն տերանց կենդանի :  
Դաւթին տուրիր աղօմք ու սէր ,  
Սողոմնին միտք հանձար .  
Մեղ եւս տուր օրհնեալ Հոգի .  
Շնորհ և լոյս սրբարար :  
Ո՛չ զոհ պարարտ , ո՛չ գանձք առաս  
Չեն քեղ հաճոյ պատարագ  
Քննես զամեն , լնտրես խոնարհս  
Հանդչս ՚ի նա խանդակամթ :  
Ցողէն անձրեւ հօտիդ վերայ  
Պարարտ արօտ տուր ձարակ .  
Աիրով պՃնիմք . Հոգւով հրճուխմք ,  
Փառս վեր երգեմք քեղ անհատ :



ԱՂՅՈՒԹԻ  
Տէրուի ՆԱԿԱՆ

Հայր մեր որ յերկինս ես , սուրբ եղիցի  
անուն քո : Եկեսցէ Արքայութիւն քո . եղի-  
ցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի :  
Զհաց մեր հանապաղորդ տուր մեղ այսօր :  
Եւ թող մեղ զպարտիս մեր , որպէս և մեք  
թողըւմք մերոց պարտապահաց : Եւ մի տա-  
նիր զմեղ ՚ի փորձութիւն . այլ փրկեա զմեղ  
՚ի չարէ : Զի քո է արքայութիւն , և զօրու-  
թիւն , և փառք յաւիտեանս . Ամէն :

ՎԵՐՋ



# ԲԱՌԱՐԱՆ

---

Այսպ , ամօթ . աիպ :  
 Ապուխտ . իսապրմա :  
 Արգանակ , մաի լուր :  
 Աւիւն , սէր , ցանկութիւն . աշտ :  
 Բիտ . հաւոււ վերին մատն . մանուղ :  
 Գազպէ . գո-պըկի . հելլալ :  
 Դեգ , կոպիտ , անշնորհք :  
 Դեր , փոխանակ , ներհակ :  
 Դիւան , ատեան , գրատուն :  
 Երփ , գոյն :  
 Զսպանակ . եայ :  
 Թակ . թօդմագ :  
 Թակոյկ , սափոր . իւսպի :  
 Թեր . կողմ . լարաֆ :  
 Թըթնչուկ . գո-լու գո-լուլ :  
 Լախուր . սէրէվիլ :  
 Խաշ , թթոււ խմոր . մայտ :  
 Խողանակ . ֆուլ :  
 Խոչ , արգելք :

Կագ , կոիւ . մարաշ :  
 Կիճ , խայթոյ :  
 Կոգի . կարագ . լելէ եալլ :  
 Կորթ , չհերկուած գետին :  
 Հակ . տէնի :  
 Ճակնդեղ , կարմիր բանջար . ժաղլ :  
 Ճիւազ , արտասոսլոր կենդանի . իոլիք :  
 Մոշ , մոշի . ելլու ալլալ :  
 Յանգ , յարմար :  
 Յեղց , լեցուն . լաշիլ :  
 Յովազ . իւլէնի :  
 Նեկտար , աղնիւ ըմպելի :  
 Նրբան , մուճակի տակի կաչին :  
 Ուրագ . ռէսէր :  
 Ուռճանալ , ծլիլ , առատանալ :  
 Պայ , առասպելեալ մարդ . իւրի :  
 Սէգ , ամբարտաւան . ժիպի :  
 Վէս , պիրտ գլուխ . տէնիսիլ :  
 Տէգ . հըագ :



ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

- 56 Երես . Քամի , (օդ) :
- 59 " Գրիչ :
- 116 " Կով (Եղջիւր , բերան , կաթ ,  
միս) :
- 130 " Փետուր գրիչ :
- 136 " Մարդ (ձեռք , ոտք , գլուխ ,  
սիրտ , մատներ , եղունգ) :
- 151 " Մուճակ :
- 206 " Կրակ (լըս , տաքութիւն) :

---

Վ Ր Ի Պ Ո Կ Ք

ՍԻԱԼ,	ՈՒՂԻՂ	ԵՐԵՍ
Կաթատու ,	Կաթնտու .	13 ՚ ՚ Յանօյժ .
Թուամազ ,	Թաւամազ .	23 ՚ ՚ .
Նուրբ ,	Թաւ .	129 ՚ Տող 3 .
Դողուկ ,	Դալուկ ,	146 ՚ ՚ 13 .

---

2013

3787

«Ազգային գրադարան»



NL0062513

